

11765

891.99

2-19

1898

✓
ՎԱՐՔ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ

ԶՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԶԱՅ

ԱՀԽԱՐՀԱԲԱՐ ՈՏԱՆԱԴՈՐ

ԿԱԶՄԵՑ

Հ. ՄԱՏԹԷՈՍ ՀԱՃԵԱՆ

ԿՐՕՆ. ՄԻԽԹ.

ՏՊԵԱԼ ԾԱԽԻԻՔ

Պ. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՄԱՇՈՒՐԵԱՆ ԽՈՏՈՐՋՐՑԻՈՅ

223



ՎԻԵՆՆԱ

ՄԻԽԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1898.

891.99

Հ-19

Long

Վ Ա Ր Ք

ՏԵԱՌՆ ՄԵԲՈՅ ՅԻՍՈՒՄԻ ԳՐԻՍՏՈՍԻ

891.99
2-19

ՎԱՐՔ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ

ԶՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԶԱՅ

ԱՀԽԱՐՀԱԲԱՐ ՈՏԱՆԱԻՈՐ

ԿԱԶՄԵՑ

Հ. ՄԱՏԹԷՈՍ ՀԱՃԵԱՆ

ԿՐՕՆ. ՄԽԻԹ.

ՏՊԵԱԼ ԾԱԽԻԻԲ

Պ. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՄԱՇՈՒՐԵԱՆ ԽՈՏՈՐԶՐՅԻՈՅ



ՎԻԵՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1898.

2003

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մտիկ ըրէ, ո՛վ ընթերցող,
Իջնայ վրադ երկնային ցող.
Պատգամըն Տեառն ընկալ սրտանց
Անմահ հոգւոյ քո անգին զանձ:

Յարդարեցի ես քու սիրոյդ
Վարք Յիսուսի փոքրիկ զրքոյկ,
Աշխարհաբար պարզ մեր լեզուս,
Որ հասկընաս զամէն դիւրս:

Պատմեցի քեզ ծնունդ նորա,
Քարոզութիւն, չարչարանք, մահ.
Յարեաւ յետոյ հրաշալի,
Արքայութեան դրաւ ըանալի:

Անոր շաղագ ետեւէն գնա,
Որ Դրրախտին քեզ դուռն բանայ:
Ընթերցիր դուն սրտիւ ուրախ
Մատենիկիս վաթսուն հինգ տաղ,


Երգէ՛ երգէ՛ քու Փրկչի՛ն սէր,
Որ զինքն տուաւ քեզ-ի նուէր.
Տայ քեզ իւր փառքն Արքայութեան,
Ուրախ ըլլաս միշտ յաւիտեան:

Գրեցաւ Ի Կ. Պոլիս, Փանկաթի:

41068- աւի.



24625-61



Ա. Տ Ա Ղ

Մարդեղութիւն Յիսուսի Բրիստոսի:

Ա Ի Ե Տ Ո Ի Մ

*Երկնից դուռնք յաղթ ոսկեղէն բացուեցան,
Բանըն Աստուած ի փրկութիւն մեր մարդկան
Իջաւ խոնարհ եւ հեղ Կուսին ի յարգանդ,
Առաւ մարմին, մեղի նրման եղաւ մարդ:*

*Սարսափեցան ոգիք դժոխոց սեւադէմք,
Յոյժ հրձուեցան երանական Հրեղէնք:
Մահկանացուն ի կարգ վերին բարձրացաւ,
Փարատեցաւ եւ չքացաւ ողբ, կոծ, ցաւ:*

*Յերկնուստ իջաւ Դաբրիէլ մեծ հրեշտակ¹
Դալիւեացոց Նաղարէթ փոքրը քաղաք
Առ Մարիամ կոյս՝ նշանուած նա արդէն
Յովսեփայ հետ, Դաւթի տնէն եւ ցեղէն:*

¹ Ղուկ. Ա. 26—38:

Ըսաւ անոր ուրախակից մեծապէս
 «Ուրախ եղեր դու բերկրեալդ, Տէր ընդ քեզ:»
 Իսկ Մարեմայ սուրբ սիրտ մաքուր, զգայուն,
 Խռովեալ խորհէր. ինչ պիտ' ըլլայ այս ողջոյն:


Ըսաւ հրեշտակըն Մարիամ մի վախնար,
 Զի յԱստուծոյ գտար շնորհք անհամար:
 Ահա պիտի յղանաս, ծնանիս որդի,
 Անոր անունը Յիսուս կոչես պիտի:

Պիտի կոչուի Տեառն բարձրելոյ Որդի նա,
 Իւր հօր Դաւթի աթոռն անոր պիտի տայ.
 Թագաւորէ պիտի բազմած յաւիտեան,
 Պիտի չըլլայ արքայութեան իւր վախճան:

— Այդ ի՞նչպէս ինձ, ըսաւ Մարիամ է հնար,
 Քանզի ես ինքըս մշտական եմ անայր:
 — Հոգին սուրբ դայ պիտի քեզ, կրկնեց անի,
 Վերադ ըլլայ զօրութիւն Տեառն հովանի:

Այն որ քեզմէ լոյս պիտ' տեսնէ անարատ,
 Որդի Ասծոյ պիտի կոչուի երկնառար:
 Եղիսաբէթ ալ յղի է քո ազգական
 Անյուսալի հասակին մէջ ծերութեան:

Ամուլ կոչուած էր նա շատ տարիներով,
 Զի չկայ բան մ'անհրնար Աստուծոյ քով:
 — Ըլլայ քու խօսքդ, պատասխանեց Մարիամ,
 Ահաւասիկ ես աղախին Տեառն կամ:



Բ. Տ Ա Ղ

Այցելութիւն Մարեմայ:

Կոյս Մարիամ էր տակաւին նոր յղի,
 Այցելեց իւր ազգականին ցնծամբ լի¹.
 Երբ Մարիամ մըտաւ տան մէջ, ողջոյն տուաւ,
 Եղիսաբէթ լըցաւ հոգւով յոյժ անբաւ:

Խաղաց մանուկն յորովայնին, սրբեցաւ
 Ամէն մեղքէ, ոչ մէկ արատ մնաց բնաւ:
 Գոչեց այսպէս. «Օրհնեալ ես դու մէջ կանանց,
 Օրհնեալ է պտուղ որովայնիդ անգին գանձ.

Ուստի՞ է որ Մայրն Աստուծոյ ինծի դայ:»
 Այս է խոնարհ պատասխանն ալ Մարեմայ.
 «Իմ անձս զԱստուած փառաւորէ անդադար,
 Հոգիս փրկչով իմ ցնծացաւ անսպառ.

Իւր աղախնոյն խոնարհութեան նայեցաւ,
 Երանի ինձ պիտի տան միշտ ազգք բնաւ:»
 Մարիամ կոյս երեք ամիս հոն մընաց,
 Յետոյ սիրով շատ մեկնեցաւ տուն գրնաց:

¹ Ղուկ. Ա. 39—48:



Գ. Տ Ա Ղ

Ծնունդ Յիսուսի Բրիստոսի:

Որ էն անձառ ի միշտ Կուսէն ծնաւ անցաւ¹
Եւ Անմարմինն ի խանձարուրս պատեցաւ,
Ի Բեթղէհէմ, Հրէաստանի կողմ թաղուն,
Ի Թուականի քառասներորդ մեծ դարուն:

Յանկարծ վերուստ բիւրաւոր գունդք հրեշտակաց²
Երգէին երգըս երկնային վար իջած.
«Փառք ի բարձունըս Աստուծոյ մեծազօր,
Խաղաղութիւն մահկանացւոյն սգաւոր:»

Եւ տեսներով անոնց մեծ փառք հովիւներն,
Որք կենային իրենց հօտին քով գիշերն,
Սքանչացան, զարհուրեցան անքանակ.
Հրեշտակներ ըսին անոնց. Մի վախնաք:

Ուրախութիւն կ'աւետենք մեծ մշտական
Ձեզի համար եւ բոլոր ժողովրդեան.
Քանզի ծնաւ ձեզի փրկիչ աշխարհի
Ի Բեթղէհէմ Օծեալ Աստուած հրաշալի:

¹ Մատթ. Բ. 1:

² Ղուկ. Բ. 8—16:

Այս ձեզ նշան. Պիտ' գտնէք ի խանձարուրս
Մանուկ պատեալ նորածին, դրուած մնուր:
Անոնք պայծառ լուսէն զմայլած եւ խկոյն
Եկան երկիր պաղին Մանուկ Աստուծոյն:

Ասող շողշողուն խորասարդ լուբջ երկինք¹
Փայլէր չքնաղ, կանչէր մարդիկ նա առ ինք.
Միայն երեք մոգ թաղաւորք հեռուէն
Յափշտակուած կու գային շոյտ ետեւէն:

Եկան հասան Բեթղէհէմի սուրբ ախոռ,
Երբ ներս մտան տեսան Մանուկն ծնած նոր,
Բոլորովին պատեալ լուսով երկնային,
Երկիր պաղին հիացած սուրբ Մանուկին:

Ոսկի, կնդրուկ ընծայեցին եւ զմուռս
Նշանակեն սոքա հաւատք, սէր եւ յոյս:
Յնծութեամբ լի ծածուկ ճամբով դարձան ետ
Իրենց երկիրն. մնացին բարի միշտ յաւէտ:

¹ Մատթ. Բ. 2—12:



Դ. Տ Ա Ղ

Փախուստ Յիսուսի: Կոտորած անմեղ Մանկանց:

Հրեշտակ Տեառն երեւեցաւ Յովսեփայ¹.

«Ա՛ռ մանուկն, Մայրն եւ Եգիպտոս, ըսաւ, գնա:»
Հնազանդեցաւ, Ճամբայ ելաւ գիշերանց,
Շատ նեղութեամբ զանոնք առաւ եւ գնաց:

Երբ Հերովդէս լսեց ծնունդնոր Արքային,
Կատաղեցաւ կատաղութիւն մոլեգին.
Հանեց հրաման, ջարդել սրով անգթաբար
Բեթղէհէմի անմեղ մանկունքն եւ արդար:

Եւ մարգարէն կ'ըսէ. «Հռամէն ձայն հնչեց²,
Աղետալի աղաղակներ, լաց, ողբ մեծ:»
Յիսուսի տեղ մեռան այն հեզ տղաք սիրով,
Թռան գացին իրենց հոգիք Վերնոյն քով:

Ժանտ Հերովդէս մեռաւ մահ ժանտամահ.
Հրեշտակ Տեառն երեւեցաւ Յովսեփայ.
«Ա՛ռ Մայրն, Մանուկն, Եգիպտոսէն ել գնա
Հըրէաստան ի հայրենիա Յակոբայ:»

¹ Մատթ. Բ. 13—23:

² Երեմ. ԼԱ. 15:



Ե. Տ Ա Ղ

Ծնունդ Յովհաննու Մկրտչի:

Երբ Բանն Աստուած տակաւին չէր մարմնացած
Եկաւ հրեշտակ Տեառն վեց ամսոյ չափ յառաջ¹,
Պատրաստելու Յիսուսի մէկ կարապետ.
Մըտաւ տաճարն, Զաքարիայ ողջոյն ետ:

Մինչ Աստուծոյ մատուցանէր խունկ անոյշ
Զարհուրեցաւ, ինկաւ գետին, վախցաւ յոյժ:
«Մի՛ վախենար, ըսաւ իրեն հրեշտակն,
Եղիսաբէթ պիտի ծնի քեզ որդեակ:

Հոգւով սրբով պիտի լեցուի. Յովհաննէս
Անոր անունն յորջորջելով անուանես.
Մեծ կարապետ պիտի երթայ Տեառն առաջ.
Ուրախութիւն պիտի ըլլայ շատ ազգաց:»

Զաքարիա տուաւ անոր պատասխան.
«Ո՛վ դու հրեշտակ, ի՞նչպէս գիտնամ ես այդ բան,
Եղիսաբէթ կինս է ամուլ բազմամեայ,
Ես ծերացած, բոլորովին ալ յոյս չկայ:»

Պատասխանեց հրեշտակն ցասմամբ. «Յայեա յիս.
Ես յԱստուծոյ բերի քեզ զայդ աւետիս.
Թերահաւատ, ահա ըլլաս մունջ հիմայ,
Մինչեւ բան Տեառն կաարուի քու վըրայ:»

¹ Ղուկ. Ա. 5—10:

Զաքարիա նշանացի կը խօսէր
Ժողովրդեան որ զարմացած էր կեցեր.
Պատուհասեալ տրտում տխուր տուն դնաց,
Եղիսաբէթ այն օրերէն էր յղացած:

Եկաւ հասաւ ծնաներու ժամանակ,
Եղիսաբէթ զարմանալի ծնաւ որդեակ.
Շուրջ ժողվեցան իւր ազգականք խուռընթաց,
Ուրախակից եղան մէկտեղ ծնողաց:

Ութ օրէն վերջ թլփատելու երբ եկան,
Մայրն Յովհաննէս անուն կ'ուզէր տալ մանկան,
Բայց ազգականք Զաքարիա կ'ուզէին.
Ան ժամանակ իւր հօր դարձան հարցուցին:

Տախտակ մ'ուզեց, վրան գրեց՝ Յովհաննէս.
Ամէնք իսկոյն ըսքանչացան մեծապէս:
Զաքարիայ յանկարծ լեզուն բացուեցաւ,
Օրհնութիւններ երգեց երկնից Տեառն անբաւ:

«Օրհնեալ, ըսաւ, է Տէր Աստուած Յակոբայ,
Որ հաճեցաւ յայցելելութիւն գալ հիմայ.
Հանեց եղջիւր իր ծառայէն Դաւթի տնէն,
Ժողովրդեան տալ փրկութիւն համօրէն:»



Զ. Տ Ա Ղ

Թլփատութիւն եւ Ընծայում՝ Յիսուսի:

Եկաւ հասաւ թլփատելու ժամանակն¹,
Ինչպէս ըսած էր Գաբրիէլ հրեշտակն
Յիսուս անուն տուին անմեղ սուրբ Մանկան,
Որ է փրկիչ զի նա փրկեց զազգ մարդկան:

Եւ երբ օրերն մերձեցան սրբութեան²,
Ընծայեցաւ հին օրինաց համաձայն
Երուսաղէմ՝ քաղաքին սուրբ տաճարը,
Զոյգ մը տատրակ մէկտեղ առած իւր մայրը:

Կը սպասէր հոն սուրբ Սիմէոն ծերունին,
Որ յԱստուծոյ առած հրաման սրտազին,
Զտեսնել մահ, մինչեւ տեսնէ աչօք բաց
Օծեալըն Տեառն՝ Ակնկալութիւն այլազգեաց:

¹ Ղուկ. Բ. 21:

² Ղուկ. Բ. 22-35:

Երբ իւր ծնողքն զինք բերելով մատուցին
 Դւր գիրկն առաւ զնա սիրով ծերունին.
 « Խաղաղութեամբ արդ կ'արձակես զիս, ասաց,
 Աչերս տեսան քու փրկութիւնդ, իմ Աստուած: »

Եւ Մարեմայ դարձաւ ըսաւ. « Ասիկայ
 Կանգման, գլորման ահա մարդկան համար կայ.
 Զու անձէդ ալ պիտի անցնի երկսայրին,
 Շատ սրտերէ խորհուրդք պիտի յայտնուին: »



Է. Տ Ա Ղ

Մանուկն Յիսուս ի տաճարին:

Ամէն տարի Նազարէթէն կ'երթային¹
 Յիսուսի ծնողք Երուսաղէմ սուրբ Զատիկին.
 Յիսուս էր երբ տասնութիւն տարեկան,
 Երուսաղէմ ելան օրով տօնական:

Յաւարտ տօնին երբ ուղեցին ետ դառնալ,
 Ահա Յիսուս կորուսին հօն, չգտան ալ.
 Ամէն ուրեք շատ խնդրեցին, բայց պարապ,
 Նորէն ելան եկան քաղաքն արագ:

Երեք օրէն եկան տաճարն վերջապէս,
 Երբ զինքն տեսան հօն ցնծացին մեծապէս.
 Վարդապետաց հետ կը խօսէր, հարցընէր,
 Ամէնք էին իւր խօսքերուն զարմացեր:

¹ Ղուկ. Բ. 41—52:

Մայրըն ըսաւ. «Այդ ի՞նչ ըրիր մեզ, Որդեակ,
 Հայրըդ ու ես խնդրէինք քեզ շարունակ:»
 Յիսուս ըսաւ. «Կը խնդրէիք զիս ինչո՞ւ,
 Չէի՞ք դիտեր որ Հօրս տունն եմ ըլլալու:»

Իջաւ անոնց հետ իրենց տեղն Նազարէթ,
 Եւ ինքն անոնց էր հընազանդ միշտ յաւէտ:
 Կը զարգանար իմաստութեամբ, հասակաւ,
 Շնորհք յԱստուծոյ, ի մարդկանէ, առ տակաւ:



Ը. Տ Ա Ղ

«Բարոգութիւն Յովհաննու Մկրտչի:

Փութաց պաշտօն իւր կաաարել Յովհաննէս,
 Աւետրանիչ սուրբըն Մարկոս գրէ ինչպէս¹.
 «Իմ հրեշտակս զրկեմ առջեւդ ահա,
 Որ պատրաստէ եւ յարդարէ քեզ ճամբայ:

Չայն բարբառոյ յանապատի, հրեշտակ
 Պատրաստ ըրէք Տիրոջ ճամբան հարթ շիտակ:»
 Երբ Յովհաննէս յանապատի խստակեաց՝
 Կը քարոզէր ապաշխարել ի մեղաց:

Աշխարհ ամէն կու գար իրեն գունդագունդ,
 Մկրտուէին Յորդանան գետ եւ անունդ
 Սուրբ հոգեւոր իրենց հոգւոյն կ'առնուին
 Ապաշխարեալ իրենց մեղքերն մարդկային:

¹ Մարկ. Ա. 2—8:

Եւ Յովհաննէս էր զգեցած ուղտու մաղ,
 Կ'ուտէր մարախ, մեղը վայրենի հանապաղ:
 Քարող կու տար. « Կու գայ հըզօր մէկն, ասաց,
 Որուն քակել չեմ արժանի խրացք կօշկաց:

Մկրտեցի ես ձեզ միայն պարզ ջրով,
 Եւ մկրտէ հոգւով սրբով եւ հրով.
 Որ հեծանոց երկժանի ձեռքն ունի արդ¹,
 Կալը մաքրէ, անշէջ հրով պրէ յարդն:»

¹ Մատթ. Գ. 12:



Թ. Տ Ա Ղ

Յիսուս կը մկրտուի:

Յիսուս եկաւ Եսաղարէթէն Յորդանան՝
 Առ Յովհաննէս, իբր մեղաւոր մեզ նրման,
 Մկրտուելու խոնարհաբար ինքն անկէ.
 Իսկ Յովհաննէս զանի իսկոյն կ'արգիլէ.

« Ես ինքս ծառաս քեզմէ եմ նախ մկրտուելու,
 Ի՞նչպէս հնար է որ ինձի կու գաս դու:»
 Յիսուս ըսաւ. « Թող հիմայ, մեզ է վայել
 Այսպէս ամէն արդարութիւն կատարել:»

Այն ժամանակ անսաց իրեն ըշտապաւ,
 Մկրտեց զձէր. յանկարծ երկինք բացուեցաւ,
 Իջաւ Հոգին աղաւնոյ պէս ի վերայ,
 Չայն եկաւ. « Դուն ես Որդիս, քեզ հաճեցայ:»

Հոգին տարաւ զինքն անապատ նոյն ժամուն²,
 Առանց հացի հոն մնաց օր քառասուն,
 Եւ փորձեցաւ սատանայէ չարաթոյն,
 Հրեշտակներ եկան պաշտել զինքն իսկոյն:

¹ Մատթ. Գ. 13—17:

² Մարկ. Ա. 12—13:



Յետոյ տեսաւ անդին երկու եղբայրներ,
 Նաւակի մէջ ուռկան էին պատրաստեր,
 Կանչեց զերենք՝ ըզնակորոս, Յովհաննէս.
 Թողին նաւակն ու հայրն, զացին փութապէս:

Շաբաթ մտաւ Կափառնառում՝ քաղաքը¹,
 Ժողովրդեան սորվեցրնէր իւր պարտքը.
 Ամէնք անոր վրայ էին զարմացեր,
 Զի տիրաբար զերենք այնպէս խրրատէր:

¹ Մարկ. Ա. 21—22:

Ժ. Տ Ա Ղ

Յիսուսի Քարոզութիւն:

Յիսուս եկաւ Նազարէթէն Գալիլեա¹,
 Բնակեցաւ Կափառնառում՝ ծովեզրեայ.
 «Ապաշխարեցէք այժմ, անդադար քարողէր,
 Արքայութիւն երկնից է արդ մերձեցեր:»

Մինչ ծովափէն կ'անցնէր, կանչեց հեղաբար
 Սիմոն Պետրոս եւ Անդրէաս իւր եղբայր,
 Որոնք ձգած էին ի ծով ըզգործին,
 Զի արուեստիւ աղքատ ձկնորսք միշտ էին:

Անոնց ըսաւ. «Թողէք ի բաց այդ ուռկան,
 Եկէք ինձի, որսորդ ընեմ ձեզ մարդկան,
 Անոնք իսկոյն թողին լճին ինչ ամէն,
 Գացին սիրով մեր Յիսուսի ետեւէն:

¹ Մատթ. Դ. 13—22:



ԺԱ. Տ Ա Ղ

Կանայ Հարսանիքը:

Կանա քաղաքն հարսանիք կար երկրորդ օրն¹,
Հրաւիրուեցաւ Յիսուս ալ հետ մէկտեղ Մօրն,
Աշակերտներն ալ նոյնպէս հոն գտնուէին,
Որ օրհնէ սուրբ պըսակ փեսին ու հարսին:

Հարսնիքի մէջ յանկարծ գինին պակսեցաւ.
Մարիամ շոյտ Յիսուս որդւոյն յայտնեց ցաւ.
«Գինի չունին, ըսաւ, Ո'րդեակ, նայէ ինձ:»
Յիսուս. «Նին դու, պատասխանեց, ինձի ի՞նչ:»

Հոն տեղ կային մարմարեայ վեց թակոյկներ.
«Լեցուցէք դուք ատոնք ջրով մինչեւ վեր,»
Ըսաւ Յիսուս ծառաներուն: Երբ ըրին,
«Բերէք ըսաւ, տաճարպետին.» եւ բերին:

¹ Յովհ. Ա. 1—11:

Երբ տաճարպետն ճաշակեց չէր գիտեր,
Սակայն միայն գիտէին այն ծառաներ.
«Ամէնք յառաջ կը խրմեն քաղցր գինին,
Երբ գինովնան, խօսեցաւ հետ փեսային:

Այն ժամանակ գէշը խրմեն շարունակ,
Դուն պահեցիր ցայժմ գինիդ անուշակ:»
Այս է Տիրոջ ըսածն ինչեաց առաջինն,
Յայտնեց իւր փառքն եւ աշակերտք հաւտացին:



ԺԲ. Տ Ա Ղ

Քարոզութիւն Յիսուսի:

Յիսուս չորս կողմ՝ Աւետարան քարոզէր¹,
Կ'ուսացանէր, կը բռնէր հիւանդներ.
Անոր համբաւն ելաւ ամէն կողմերէն.
Հազարաւոր մարդիկ գային ետեւէն:

Հեռն ելլելով կ'ուսացանէր բազմութեան²,
Նոյն վայրկենին իւր աշակերտք ալ եկան.
Աղքատներուն հոգւով, ըսաւ, երանի.
Սուրբ հըրեշտակ զերենք երկինքը տանի:

Շատ երանի սգաւորաց, զի անդին
Անոնք պիտի ուրախալից մխիթարուին:
Երանի հեղ եւ գառնուկի պէս մարդկան,
Անոնք պիտի վայլեն երկիր պատուական:

Երանի որք արդարութեան մշտական
Են ծարաւի, անոնք պիտի յաղենան:
Եւ երանի ողորմածաց, որք անդէն
Տեառնէ պիտի ողորմութիւն շատ գտնեն:

¹ Մատթ. Դ. 24—25:

² Նոյն. Ե. 1—19:

Երնէկ սրտիւ սուրբ եղողին յաղթական,
Ըզճէր Աստուած պիտի տեսնէ յաւիտեան:
Երնէկ մարդուն խաղաղարար անպակաս,
Որդի Ասծոյ պիտի կոչուի հանապազ:

Երնէկ՝ որոնք արդարութեան համար խիստ
Են հալածւած. արքայութիւն՝ անոնց միշտ:
Երնէկ տամ երբ ձեզ նախատեն անդադար
Եւ հալածեն չար անզգամք ինձ համար:

Յնծացէք յոյժ, զի մարգարէք ալ յառաջ
Ձեզի նման եղան իժիր հալածւած:
Դուք ամէն ժամ համեմիչ էք աղ երկրի.
Աղն անհամի, ինչով պիտի համեմի:

Դուք աշխարհի ըլսք պիտի լոյս պայծառ.
Հերան վրայի քաղաքն թաքչել չի կրնար:
Ճրլագ զրնեն աշտանակի մը վերայ,
Տան բընակչաց լուսապայծառ լոյս կու տայ:

Հուսաւորէ այնպէս մարդկան լոյսըն ձեր,
Օրհնեն ըզչայր՝ տեսած բարի ձեր գործեր:
Զկարծէք որ, եկայ քակել օրէնքը,
Այլ կատարել նամանաւանդ ամէնքը:

Ով կը լուծէ չարութեամբ մէկ պատուիրան,
Մտնելու նա արքայութիւն չէ արժան:
Թէ կործանին, անցնին երկինք ու երկիր,
Այս իմ խօսքեր պիտի մնան միշտ իժիր:

ԺԳ. Տ Ա Ղ

Զարոգութիւն Յիսուսի:

Երբ ի սեղան մատուցանես պատարագ¹
Գնա՛ հաշտուէ՛ նախ քու եղբորդ հետ արագ
Եթէ յիշես թէ ոխ ունիս դու անոր,
Ետքէն մատո՞ պատարագ հօրն երկնաւոր:

Թշնամեցող հետ յառաջուրնէ եղևր հաշտ,
Ապա թէ ոչ յանկարծակի կ'իյնաս բանտ.
Մատենելով քեզ դատաւորին մեծ ատեան,
Հոն կը մնաս եւ տառապիս յաւիտեան:

Ով որ քեզմէ կը խնդրէ ինչ, անոր տուր²,
Մի դարձըներ զինքըն պարապ ու թափուր.
Եւ քու ընկերդ սիրէ յարգէ անձիդ պէս,
Առատապէս իրեն բարիք միշտ ընես:

¹ Մատթ. Ե. 23—25:

² Նոյն Ե. 41—48:

Սիրեցէք դուք ձեր թշնամին մեծ սիրով,
Համբերեցէք նեղիչներուն անխռով.
Կ'ըլլաք որդիք արժանի հօրն երկնաւոր,
Որ ծագէ լոյս բարեաց, չարաց ամէն օր:

Թէ սիրէք ձեր սիրելիներն միայն,
Մեղաւորք նոյն կ'ընեն ձեզ պէս. ի՞նչ վարձք այն.
Կամ տաք ողջոյն բարեկամաց նորանոր:
Արդ կատարեալ եղէք պէս հօրն երկնաւոր:



ԺԴ. Տ Ա Ղ

Քարոզութիւն Քրիստոսի:

Ըղգոյշ կեցիր ողորմութեանդ վայելուչ¹,
Մարդկան առջեւ չընես բնաւ անոնց ցոյց.
Երբ կ'ընես դուն ողորմութիւն աղքատին
Ձըլայ զարնես փող սուտ փառաց ամէն գին:

Ինչպէս կ'ընեն կեղծաւորք հրապարակը,
Որ յագեցնեն սընտրի պիղծ փափաքը:
Բայց դուն ծածուկ ողորմութիւնդ միշտ ընես,
Ծածկատես Հայրդ վարձատրէ յայտնապէս:

Ձկատարես բնաւ աղօթքդ մէջտեղ,
Ինչպէս կ'ընեն այն կեղծաւորք ամէն հեղ,
Ն'ուզեն միայն փառաւորուիլ մարդկանէ.
Ճշմարտիւ ձեզ կ'ըսեմ, անոնց վարձքն ան է:

Մտիւր սենեակդ երբ աղօթքի կը կենաս,
Դուռդ փակէ, աղօթք ըրէ անպակաս
Հօր Աստուծոյ որ կը տեսնէ ծածուկ քեզ,
Հատուցանէ, վարձատրէ յայտնապէս:

¹ Մատթ. 23. 1—21:

Աղօթքի մէջ մ'ըլլաք իբրեւ հեթանոսք,
Որք լսուելու համարին կայ պէտք շատ խօսք.
Գիտէ ձեր Հայր կարեւորն դեռ չինդրած,
Արդ դուք չըլլայ թէ նմանիք այնպիսեաց:

Այսպէս կեցէք դուք աղօթքի Աստուծոյ.
«Հայր երկնաւոր, միշտ սուրբ ըլլայ անուն քո.
Արքայութիւնդ թող գայ, ըլլայ կամքդ ինչպէս
Երկինք, երկիր. մեր օրական հաց տուր մեզ:

Թող մեր պարտքեր խղճարով, Հայր մեր զթած,
Ինչպէս մենք ալ թողունք մեր պարտապանաց:
Ձարէն փրկէ, մեզ մի տանիր փորձութեան.
Քուկդ է արքայութիւն եւ փառք յաւիտեան:»

Եթէ մարդկան թողուք իրենց յանցանքը,
Աստուած ալ ձեզ կը թողու ձեր մեղանքը:
Երբ պահէք պահք կեղծաւորաց չըլլաք նման,
Տրամին տխրին, որ երեւին սուրբ՝ մարդկան:

Օձէ՛ գլուխդ, լուս երեսդ երբ պահես,
Որ չերեւիս պահող մէկու մը երես.
Այլ Հօրդ ծածուկ երեւիս ամենատես,
Հատուցանէ առատ վարձ քեզ յայտնապէս:

Երկրի վըրայ չըլլայ դանձեք ձեզի դանձ,
Ուր ցեցն ուտէ, գողք գողանան առ նախանձ.
Այլ դանձեցէք յերկինս ձեզ դանձ հոգեւոր,
Ուր ապահով վայլէք պիտի դիմաց Հօր:



ԺԵ. Տ Ա Ղ

Քարոզութիւն Բրիստոսի:

Ոչ որ կրնայ երկու տերանց ծառայել¹,
Կամ մէկն ատէ, սիրէ մէկալն՝ է վայել.
Թէ՛ Ասծոյ, թէ՛ մամոնայի անիրաւ
Ծառայութիւն ընել կարող չէք բնաւ:

Անոր համար կ'ըսեմ, չընէք հոգ երբեք
Թէ ինչ հագնիք, կամ ինչ ուտէք եւ խմէք:
Տեսէք երկնից թռչուններուն անհամար,
Ձեր Հայրն զերենք կերակրո՞ւ հայրաբար:

Ապաքէն դուք չէ՞ք անոնցմէ առաւել.
Հոգին մարմնէն աւելի պէտք է յարգել:
Միթէ կարող է կանգնել մէկ իմաստուն
Իւր հասակին վրայ փոքրիկ մէկ կանգուն:

Արդ չընէք հոգ հեթանոսաց պէս անմիտ.
Գիտէ ձեր Հայրն պիտոյքըն ձեր ճշմարիտ:
Խնդրեցէք նախ արքայութիւն Աստուծոյ,
Այդ ամէն բան պիտի տրուի ձեզ յետոյ:

Ձըլայ դատէք, որ չդատուիք պարապ տեղ².
Եթէ դատէք՝ պիտի դատուիք ամէն հեղ:
Ինչ կը տեսնես եղբորդ աչքին փոքր շեւղեր,
Եւ քու աչքիդ մեծ գերաններ չես տեսներ:

¹ Մատթ. Զ. 24—34:

² Նոյն. Է. 1—19:

Նախ քու աչքիդ գերանն հանէ, կեղծաւոր,
Յետոյ հանէ շեւղըն աչքին քու եղբոր:
Շանց սրբութիւն չտաք եւ մի խողերուն
Մարգարիտներ ձգէք, կոխուին ապարդիւն:

Կ'ըսեմ ձեզի, խնդրեցէք մեծ հաւատքով,
Կը տրուի ձեզ. զարկէք բացուի ապահով:
Ո՞վ ձեզմէ մէկըն խնդրէ հաց իւր հօրմէն.
Միթէ քա՞ր տայ անոր հացի փոխարէն:

Թէ դուք գիտէք ընել բարիք որչա՞նց ձեր,
Ո՞րչափ եւս Հայր ձեր կու տայ ձեզ բարիքներ:
Ինչ որ կ'ուզէք որ ընեն ձեզ, դուք արէք
Նախ անոնց. այս իսկ է օրէնք, մարդարէք:

Մտէք նեղ դռնէն սուրբ առաքինութեան,
Ճամբան մոլութեան է ընդարձակ եւ լայն:
Քչեր նեղ ճամբէն կը հասնին փրկութեան.
Շատեր լայն ճամբէն կը մատնուին կորստեան:

Ըզգոյշ կեցէք դուք սուտ մարգարէներէն,
Արտաքուստ ոչխար, ներքուստ գայլ, գաղան են.
Արդ զերենք ճանչցէք անոնց յուրի պտղէն.
Փշէն խաղող կամ տատասկէն թուղ քաղե՞ն:

Բարի պըտուղ միշտ կը բերէ բարի ծառ
Եւ ծառ չար իժիւր կը բերէ պըտուղ չար:
Թէ չբերէ ամէն ծառ պըտուղ բարի,
Կտրուի շուտով, կ'իյնայ ի հընոց կ'այրի:



ԺԶ. Տ Ա Ղ

Յիսուս Հարիւրապետին ծառան կը բժշկէ եւ նաւ կը մտնէ:

Յիսուս իջաւ վաղվաղակի այն լեռնէն¹,
Շատ ժողովուրդք գնացին իր ետեւէն:
Կափառնառւմ քաղաքն մտնէր հազիւ դեռ,
Հարիւրապետ մ'եկաւ իրեն կ'աղաչէր.

«Տէր, տղաս հիւանդ անդամալոյծ է պառկած:»
Յիսուս. «Կու գամ, բրժշկեմ զինքըն, ասաց:
Պատասխանեց Հարիւրապետըն ասանկ.
«Տէր, արժանի չեմ որ մտնես յարկիս տակ:

Ըսէ խօսքով որ բրժշկուի մանուկն իմ:
Ես պաշտօնեայ՝ զինուոր ներքեւըս ունիմ.
Մէկուն կ'ըսեմ գնա՛. եկո՛ւր՝ մէկալին,
Ժառայիս թէ ըրէ զայս. շոյտ հնազանդին:»

Եւ երբ Յիսուս զայս լըսեց շատ զարմացաւ.
Չեր մէջ, ըսաւ, այսպէս հաւատք չկայ բնաւ:
Շատեր երկրիս չորս կողմերէ պիտի գան,
Արքայութիւն պիտի մտնեն յաւիտեան:

¹ Մատթ. Ը. 1—14:

Արքայութեան որդիքն պիտի դուրս մընան,
Խաւարի մէջ պիտի ողբան մշտական:
Ըսաւ անոր. «Ըստ հաւատոցդ ըլլայ քեզ.»
Եւ ողջացաւ նոյն ժամ տրդան փութապէս: —

Յիսուս առաւ աշակերտներն եւ ըսաւ¹.
Եկէք լճիս անցնինք այն կողմն, մտնենք նաւ:
Մինչ նաւէին Յիսուս մտած էր ի քուն.
Մէյ մ'ալ մեծ հով ելաւ ուժգին վրայ ծովուն:

Ալիքներէն ծածանէր նաւն ահագին.
Ամէնք մատնուած էին շատ մեծ վըտանգի:
Զարթուցին զինքըն. վարդապետ, վարդապետ,
Ահա կ'որչինք. ըսին ծովու մէջ անհետ:

Յիսուս ելաւ, ծովուն, ջրին հրամայեց,
Հանդարտեցաւ, խաղաղութիւն եղաւ մեծ:
Յիսուս ըսաւ. Ո՛ւր է ձեր յոյս, հաւատք ձեր:
Խսկ մարդիկներ էին վախցած, զարմացեր.

Հարցրնելով իրարու մէջ կ'ըսէին.
Ո՛վ է արդեօք իմաստուն մարդս որ ինքնին
չըրաման տայ քամիներուն, ջրերուն,
չընազանդին իրեն շուտով եւ խելոյն:

¹ Գուկ. Ը. 22—26:

ԺԷ. Տ Ա Ղ

Զաքէոս Մաքսապետ:

Շրջէր Յիսուս Երիբով, ահա մէկ մարդ¹.
Մեծ մաքսապետ Զաքէոս եւ հարուստ շատ,
Բազմութեան մէջ զՅիսուս տեսնել կ'ուզէր,
Հասակաւ կարճ ըլլալուն բնաւ չէր զօրեր:

Վազեց յառաջ, թղենւոյն ժանտ ելաւ վրայ,
Ուսկից պիտի մեծ բազմութեամբ անցնէր նա:
Վեր նայեցաւ Յիսուս երբ եկաւ այն տեղ.
Զաքէ, իջիր շոյտ, տունդ պիտ' ըլլամ այս հեղ:

Իջաւ անտի, ընդունեցաւ զնա երազ.
Փարիսեցիք արտնջէին շարունակ:
Ըսաւ նա. Տէր, ընչեցրս կէսըն կու տամ
Աղքատաց, զըկուողին դարձնեմ միւս անգամ:

Ըսաւ Յիսուս. Այսօր փրկուեցաւ այս տուն,
Ասի Աբրահամու որդի ըլլալուն.
Քանզի եկաւ Որդի մարդոյ խնդրելու,
Կորուսեալ մարդն փութանակի փնտռելու:

¹ Ղուկ. ԺԺ. 1—10:



ԺԸ. Տ Ա Ղ

Նիկողեմոս Իշխան:

Փարիսեցւոյ մէջ կար մարդ մ'ազնուական¹
Նիկողեմոս անունով՝ Հրէից իշխան.
Կէս զիշերին եկաւ քովը Յիսուսի.
Գիտէնք ըսաւ, եկած ես յերկիր, Ռաբբի,

ՅԱստուծոյ ի վերուստ մեզի վարդապետ,
Հարկ է որ Աստուած միշտ ըլլայ քեզի հետ,
Ապա թէ ոչ գործած հրաշքներդ յայտնապէս
Ոչ ոք կրնար գործել ճշդիւ քեզի պէս:

Պատասխանեց Յիսուս անոր ու ըսաւ.
Երկինքը չի կրնար մտնել մէկն բընաւ
Թէ վերստին չծնանի անիկա:
— Եւր մարդ ի՞նչպէս ծնանիլ արդ կարենայ:

Հնար է միթէ մտնել յորովայն իւր մօր
Եւ ծնանիլ յաշխարհ միւս անգամ նոր:
— Ի ջրոյ, ի հոգւոյ թէ մէկն չծնանի՝
Աբքայութիւն մտնել չի կրնար անի:

¹ Յովհ. Գ. 1—21:

Ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է քանզի,
 Ծնեալն ի հոգւոյ՝ նոյնպէս է հոգի:
 Ըսի քեզի, մի զարմանար բնաւ դու,
 Թէ վերստին այժմէն դուք էք ծնանելու:

Փրչէ քամին ամէն կողմ՝ ուղածին պէս,
 Ուստի գայ չես զիտեր, մինակ դու լսես.
 Սոյնպէս ամէն ծնեալն ի հոգւոյն սրբոյ:
 — Ի՞նչպէս հնար է այդ ասացեալն քոյ:

— Ուսեալ վարդապետ ես Հրրէաներուն,
 Ի՞նչպէս կարելի է չզիտնաս զայդ դուն:
 Մեր տեսածն ու լսածն կը պատմենք արդ ձեզ,
 Մեր վկայութիւն չընդունիք յայտնապէս:

Երկրաւոր սին իրաց թէ չէք հաւատար,
 Երկնաւոր սուրբ իրաց հաւատաք դժուար:
 Որդի մարդոյ միայն ելաւ երկինքը,
 Ուստի իջաւ, ուր էր յառաջ նա ինքը:

Ինչպէս Մովսէս մարգարէն յանապատի
 Բարձրացուց օձըն, կանգնեց վրայ փայտի,
 Այնպէս հարկ է անպատճառ եւ է պիտոյ
 Խաչի վերայ բարձրանալ Որդւոյ մարդոյ:

Ով որ անոր ճշմարտութեամբ հաւատայ՝
 Անանց կենաց պիտի հասնի աներկբայ:
 Այնպէս սիրեց Աստուած զաշխարհ կաթողին,
 Մինչեւ տուաւ իւր միածինն սուրբ Որդին:

Եկաւ զաշխարհ ոչ դատելու անաչառ,
 Այլ փրկելու, ազատելու տիրաբար.
 Անոր հաւատացողն կորսուիլ չի կրնար,
 Զհաւատացողն պիտի կորսուի անպատճառ:

Ճշմարտապէս այս իսկ է դատաստան, որ
 Հոյսըն եկաւ յաշխարհ պայծառ լուսաւոր.
 Բան զոյս աւելի սիրեցին խաւար,
 Զի կեանքն իրենց էր շատ չար եւ վատթար:

Ով գործէ չարն՝ կ'ատէ զոյս կենսաբեր,
 Որ չյայտնուին, չերեւին իւր չար գործեր.
 Ի լոյս երեւի սիրողն ճշմարտութեան,
 Որ յայտնուի, գործեր իւր Ասծով գործեցան:



ԺԹ. Տ Ա Ղ

Յիսուս շատ մը հիւանդներ կը բժշկէ:

Կափառնաում՝ Տէր Յիսուս մտաւ տաճար¹,
Ժողովրդեան կը խօսէր հոգեւոր ճառ:
Ջարմանային անոնք շատ որ սորվեցներ
Իշխանութեամբ իբրեւ՝ ոչ ինչպէս դպիրներ:

Ժողովրդեան մէջ գտնուէր մէկ դիւահար.
Դեւն սկսաւ աղաղակել չարաչար.
Թող տուր զմեզ նազովըցի Յիսուս դու,
Ինչո՞ւ եկար տարածամ մեզ տանջելու:

Գիտէնք զքեզ Սուրբ Աստուծոյ Բարձրելոյն:
— Ելիր ատկէ, սաստեց Յիսուս, լռէ խկոյն:
Ջարհուրելի դեւն զանի զարկաւ գետին,
Ելաւ անկէ աղաղակ տալով ուժգին:

Ջարմացան ամէնք կարի խորհրդաւոր.
Ի՞նչ այս, կ'ըսէին, վարդապետութիւն նոր,
Որ իշխանութեամբ հըրամայէ դիւաց
Եւ հընազանդին անոր ճեպընթաց:

¹ Մարկ. Ա. 21—34:

Յիսուս չորս կողմ հռչակուեցաւ նոյն ժամուն.
Անկից ելաւ եւ Սիմոնին գնաց տուն:
Ջորանցն հիւանդ էր Սիմոն Պետրոսին,
Որուն համար աշակերտացն դասք ըսին:

Ձեռքէն բռնեց եւ ոտք հանեց զանիկայ,
Անցաւ իր ջերմն եւ ծառայէր ոտքի վրայ:
Երեկոյին երբ արեգակն մտաւ մար՝
Բերին անոր շատ հիւանդներ, դիւահար:

Բոլոր քաղաքն միատեղ դուրս թափուած էր,
Բժշկեց պէս պէս ցաւերէ հիւանդներ.
Դեւեր հանէր, չէր թողուր խօսել անոնց,
Ջանի Զրիստոս ճանչնային արդէն շատոնց:



Ի. Տ Ա Ղ

Երկու Լումայք այլի կնոջ:

Յիսուս կը կենար գանձանակին դիմաց¹,
Տեսնէր Ժողովուրդն, կու գար ամէն դիաց.
Նետէին սուրբ տաճարին գանձանակ
Առատապէս շատ հարուստներ շատ ստակ:

Եկաւ այլի կին մ'ձգեց երկու լումայ:
Կանչեց աշակերտք, ըսաւ. Տեսէք հիմայ,
Ձգեց ամենէն շատ այն տառապեալ կինն
Քան անոնք որոնք գանձանակն ձգեցին:

Քանզի ամէնք իրենց աւելորդ բաներ
Տուին ընծայեցին Տեառն ի նուէր.
Իսկ ասիկայ թէպէտ աղքատ էր աւոր
Տուաւ իւր ունեցած, չունեցած բոլոր:

¹ Ղուկ. ԺԲ. 41—44:



ԻԱ. Տ Ա Ղ

Յիսուս տաճարը կը մտնէ:

Մօտ էր Հրէից Զատիկըն, երկուան դէմ¹
Ելաւ Տէր Յիսուս քաղաքն Երուսաղէմ:
Տաճարն գտաւ լումափոխներ անի,
Այլք նստած՝ արջառ ծախէին, աղաւնի:

Շինեց խկոյն մէկ խարաղան չուանեայ,
Հանեց զամէնք տաճարէն դուրս փախստեայ,
Ոչխար, արջառ եւ նոյնպէս հատաւաճառ,
Եւ կործանեց սեղանները չարաչար:

Մէկդի առէք զայդ, ըսաւ, Յիսուս բարի,
Հօրրս տունն մի դարձնէք տուն վաճառի:
Եւ յիշեցին առաքեալք ինչպէս գրուած.
«Թէ զիս պիտի ուտէ քու տանըդ նախանձ:»²

¹ Յովհ. Բ. 13—21:

² Սղմ. ԿԸ. 10:

Դուն ի՞նչ նշան, ըսէ մեզ, կը ցուցընես,
 Պատասխանեց ժողովուրդն, որ զայդ կ'ընես:
 — Բակեցէք դուք այդ տաճարը թէ կ'ուզէք,
 Նս կը շինեմ նորէն մէջ օրուան երեք:

— Բառասուն վեց տարուան միջոց այս տաճար
 Շինուեցաւ. դուն կրնաս հանել ի կատար
 Նրե՞ք օրուան մէջ: — Բայց Յիսուս կ'ընէր խօսք
 Հրաշալի իւր Յարութեան վրայօք:



ԻՔ. Տ Ա Ղ

Մեղաւոր կին մը Յիսուի առջեւ:

Փարիսեցի մ' կ'աղաչէր շատ Յիսուսի¹,
 Որ զայ նստի մէկ հեղ իրեն հետ ճաշի.
 Մտաւ նա ներս, բազմեցաւ ի սենեկին:
 Բաղաքին մէջ մեղաւոր գտուէր մէկ կին.

Նրբ լսեց որ տունն բազմաժ փարիսեցւոյն,
 Ազնիւ իւզով շէշ մ'առած եկաւ իսկոյն:
 Յետոյ անոր ոտուրներուն քով կեցեր՝
 Լար դառնապէս եւ արտասուօք կը թրջէր.

Անոր ոտքեր կը համբուրէր, կը ջնջէր
 Մազերով իւր գլխուն, իւզովն կ'օծանէր:
 Զինքը կանչող փարիսեցին զայս դիտեց,
 Թէ մարդարէ էր սա, ըսաւ մտքին մէջ,

Գիտէր թէ ով եւ ինչպիսի կին ասոր
 Կը մերձենայ, վասն զի է մեղաւոր:
 Պատասխանեց Յիսուս. Սիմոն, բան մ'ունիմ
 Բեզ ըսել: — Ըսէ, կրկնեց, վարդապետ իմ:

— Մէկ փոխատու մ'ունէր երկու պարտապան,
 Մէկը հարիւր, միւսն յիսուն էր պարտական:
 Ձկրցան տալ. երկուքին ալ շնորհէ.
 Արդ ո՞ր զանի աւելի պիտի սիրէ:

— Ինձ կ'երեւի այն, որուն շնորհեց շատ.
 — Ըսաւ Յիսուս. Ուղիղ դուն կարեցիր դատ:
 Դարձաւ կնոջ կողմն, ըսաւ Սիմոնին.
 Ոտիցըս ջուր չտուիր հոս, իսկ այս կին

Իւր արտասուօք թրջեց ոտքերս եւ մաքուր
 Իր մազերով ջնջեց, տուաւ շատ համբոյր.
 Դուն չեստուր մէկ համբոյր, չ'օծիր զիմ գլուխ.
 Իսկ ասիկա լուաց, օծեց յանոյշ իւղ:

Անոր համար կ'ըսեմ քեզի թողուին իւր
 Կենաց գործած աշխարհիս մէջ մեղքեր բիւր,
 Զի շատ սիրեց. զով շատ սիրէ շատ թողու.
 Ըսաւ անոր. Թողուին քեզի մեղքեր քու:

Սկսան ըսել բազմութիւն մ' նստողներու.
 Ո՛վ է ասի, որ մարդկան մեղքեր թողու:
 Յիսուս ըսաւ կնոջ. Հաւատա՞ր հաստատուն
 Փրկեց զքեզ, գնա ի խաղաղութիւն:



Ի Գ. Տ Ա Ղ

Սամարացի Կինը:

Յիսուս յոգնած էր ընելով շատ ճամբայ,
 Եկաւ նստաւ աղբիւրի քով Յակոբայ:
 Սամարացի կին մ'եկաւ հանելու ջուր.
 Յիսուս ըսաւ. Ատկէ քիչ մ' ջուր ինձի տուր:

Կինն ըսաւ. Դուն որ հըրեայ ես, ի՞նչպէս
 Սամարացի կրնո՞ւմէս ջուր կը խնդրես.
 Սամարացիք Հըրէից հետ չեն խառնուիր.
 Պատասխանեց Յիսուս. Թէ դուն գիտնայիր,

Ճանչնայիր ջուր քեզմէ ուզողն, ո՞վ անի,
 Խնդրէիր դուն, կու տար քեզ ջուր կենդանի:
 Կինն ըսաւ. Զուրն այն տալ ուստի՞ կրնաս.
 Դոյլ իսկ չունիս, է խորունկ շատ ջրհորս այս:

Միթէ ես դուն հայր Յակոբէն մեծ, ինքը
 Խըմեց ասկէ, խըմեցին իւր խաշինքը:
 Ըսաւ Յիսուս. Ով կը խըմէ այդ ջուրէն,
 Կը ծարաւի ամէն անգամ միշտ նորէն,

Ով իմ ջրէս՝ զոր տամ խրմէ մշտական,
 Ձծարաւի պիտի երբեք յաւիտեան:
 Կինըն ըսաւ. Տէր, այդ քու ջուրդ ինձի տուր,
 Որ չգամ հոս ջուր հանելու ալ ի զուր:

— Յիսուս ըսաւ. Գնա՛ կանչէ՛ քու երիկ:
 — Ձունիմ երիկ, պատասխանեց, այն կնիկ:
 — Կրկնեց Յիսուս. Շատ աղէկ դուն կը զուրցես,
 Եւ հինգ երիկ մինչեւ հիմայ փոխած ես.

Այժմ ունեցած երիկդ չէ քուկըդ բնաւ:
 — Պատասխանեց կինըն. Ըսիր զայդ իրաւ:
 Թուի թէ Տէր, մարգարէ ես ճշմարիտ,
 Այս լեռներուն վըրայ միայն ճշգրտիտ

Երկիր պագին խոնարհ մեր հարք Աստուծոյ,
 Եւ դուք կ'ըսէք Երուսաղէմ է պիտոյ
 Երկրպագել Տեառն Բարձրելոյ զօրութեանց,
 Հոն է տեղի սուրբ աղօթից մեծագանձ:

— Ըսաւ Յիսուս. Եկած է արդ ժամանակ,
 Ոչ միայն հոս, Երուսաղէմ շարունակ,
 Այլ չորս կողմեր տիեզերաց բովանդակ
 Մատուցանեն պիտի Հօրն սուրբ պատարագ:

— Պատասխանեց կինըն. Գիտենք, Մ'եսիայ,
 Որ կը կոչուի Յիսուս Բրիստոս, պիտի գայ,
 Պիտի պատմէ անի ամէն բան մեզի:
 — Ըսաւ Յիսուս. Ես եմ խօսողս հետ քեզի:

Ասոր վըայ եկան իւր աշակերտներ,
 Զարմանային որ կնոջ հետ կը խօսէր,
 Ձհարցուցին թէ ի՞նչ կ'ուզէ բայց սակայն,
 Կամ ի՞նչ խօսիս այդ կնոջ հետ շատ երկայն:

Կինը թողուց իւր սափորն, գնաց քաղաք,
 Կանչեց մարդիկ. Եկէ՛ք հոս, ըսաւ, արագ,
 Տեսէ՛ք մէկ մարդ որ ըսաւ ինձ իմ մեղքեր.
 Ձըլայ՝ թէ նա է Բրիստոս, որ կը սպասուէր:

Ելան շուտով մարդիկ քաղքէն, գնացին,
 Կնոջ խօսքին համար անոր հաւտացին:
 Կ'աղաչէին անոր, կենայ իրեն քով
 Բիշ ժամանակ. կեցաւ երկու օր սիրով:

Ուրիշ շատեր հաւատացին մեր փրկչին.
 Ոչ քու խօսքիդ համար, կնոջ կ'ըսէին,
 Կը հաւատանք, լսեցինք ատոր բերնէն.
 Դա է փրկիչ աշխարհի աղգաց ամէն:



ԻՊ. Տ Ա Ղ

Մատթէոս մաքսաւորը:

Կ'անցնէր Յիսուս իւր քաղքէն ծովեզերեայ¹,
Մէկ մաքսաւոր տեսաւ հոն՝ Դեւի Արիեայ,
Ձինքըն կանչեց. Նստեւէս եկուր շուտով:
Ելաւ գընաց ետեւէն անոր փութով:

Նստաւ Յիսուս անոր տունն եւ աշակերտք,
Նստած էին շատ մաքսաւորք անոր հետ:
Երբ զայս տեսան Փարիսեցիք եւ դրպիրք,
Աշակերտաց ըսին. Ինչո՞ւ անխրտիր

Մաքսաւորաց, մեղաւորաց կ'ուտէք հետ:
Ըսաւ Յիսուս. Ողջերուն չէ բժշկիչկ պէտք,
Այլ հիւանդաց. չեկայ արդարոց համար,
Հապայ մեղաւորաց՝ որ ըլլան արդար:

¹ Մարկ. Բ. 14—20:

Փարիսեցիք եւ աշակերտք Յովհաննու
Պահէին պահք, ըսին անոր. Ինչո՞ւ քու
Աշակերտներդ հիմայ պահք չեն պահեր,
Բայց կը պահեն Յովհաննու աշակերտներ:

— Առաքաստի մանկունքն, ըսաւ մեր փրկիչ,
Եր պահէ՞ն պահք փեսան իրենց հետն է մինչ.
Եր վերանայ փեսան՝ կու դայ ժամանակ,
Այն ատեն պէտք է տրտմութեամբ պահել պահք:



Ի Ե. Տ Ա Ղ

Յիսուս Առաքեալները կը դրկէ:

Յիսուս գաւառին չորս կողմ՝ կը պրտըտէր¹,
Կանչեց տասնուերկու իւր առաքեալներ.
Երկու երկու հանեց զերենք ի ճամբայ,
Տուաւ անոնց իշխանութիւն զիւսաց վրայ:

Պատուիրեց որ ի ճանապարհ չբառնան
Ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ ըստակ, այլ գաւազան.
Հագէք հողաթափ, ոչ երկու պարեգօտ.
Որ տունն մանէք՝ բընակեցէք աներկչոտ:

Երբ ձեզ չըսեն, տունը չընդունին,
Ելէք, թօթափեցէք ձեր ոտից փոշին:
Անոնք մեղաւորներ դարձնելու գացին,
Հիւանդներ բժշկէին, զեւեր հանէին:

¹ Մարկ. Զ. 7—13:

Ժողկեց Յիսուս եօթանասուն ու երկու.¹
Աշակերտներ, զրկեց՝ ուր էր երթալու:
Անոնց ըսաւ. հունձքեր շատ են, մըշակ քիչ.
Խնդրեցէք, Տէր հանէ մշակ, որ է տուիչ:

Դացէք, ահա գայլերու մէջ զրկեմ՝ ձեզ
Դաշտի վըրայ մակաղած այն գառանց պէս:
Քարոզեցէք երբ կը մանէք քաղաքներ,
Թէ արդ երկնից արքայութիւն՝ մօտեցեր:

¹ Ղուկ. Ժ. 1—3, 8:



ԻԶ. ՏԱՂ

Առակ Սերմանացանին:

Յիսուս մեր վարդապետն ծովափն էր նստած¹.
Խռնեցաւ ժողովուրդըն ամէն դիաց:
Խօսեցաւ անոնց հետ առաւելներով նա.
Սերմանացանն ելաւ ցանելու ահա.

Երբ կը ցանէր, ինկաւ մէկը վրայ ճամբուն,
Եկաւ կերաւ, ըսաւ, զայն երկնից թռչունն:
Մէկայն ապառաժի վրայ, ուր հող քիչ.
Բուսաւ շոյտ չըլլալուն զօրութիւն հիւթից:

Ծագեցաւ արեւն, այրեցաւ անընդհատ,
Զորացաւ խոյն, քանդի չունէր արմատ:
Միւսըն ինկաւ չարաչար փուշն մէջ.
Ելաւ յետոյ փուշն զանիկայ խեղդեց:

Մէկայն ինկաւ յերկիր բարի ու կախուղ,
Երեսնական, հարիւրական տար պտուղ:
Հսէ թող, ով ունի ականջ լսելու.
Խնչու ատոնց առաւելներով խօսիս դու,

¹ Մատթ. ԺԳ. 1-31:

Ըսին առաքեալներ: — Եւ Յիսուս ըսաւ.
Տրուած է ձեզ գիտնալ խորհուրդներ անբաւ,
Իսկ ատոնց շնորհուած չէ ընդհակառակ:
Ըսաւ անոնց նաեւ ուրիշ մէկ առակ:

Երկնից արքայութիւն նման է մշակին,
Որ ցանեց սերմ բարի մէջ ագարակին:
Եւ թշնամին եկաւ որոմն գիշերանց
Յանեց վրան փութով եւ փախաւ զնաց:

Պտուղ բերաւ առատ երբ բուսաւ խոտըն.
Յետոյ կամաց կամաց ելաւ որովհն:
Վաղեցին շտապեցին ծառայք տանտիրոջ.
Տէր, ըսին, սերմ բարի սերմանեցիր ոչ

Քու ագարակիդ մէջ, ուստի է որոմն:
— Ըսաւ անոնց. Ըրաւ զայն թշնամի ոմն:
— Կուղե՞ս երթանք հանենք արմատով, ըսին:
— Զըլլայ թէ ցորենն ալ հանէք միասին:

Թող տուէք երկուքն ալ միատեղ աճին.
Հնձողաց պիտ' ըսեմ ժամանակն հունձին.
Քաղեցէք որոմն, որ այրի կրակով,
Յորենն ժողվեցէք իմ քորք, կապած ի ջով:



ԻԷ. Տ Ա Ղ

Առակ վասն Արքայութեան երկնից:

Յիսուս գնաց իւր տունն ժողովուրդն թողլով¹,
Եկան աշակերտներն փութով անոր քով.
Մեկնէ, ըսին, մեզ որոմանց առակը:
Յիսուս ըսաւ. Աշխարհս է ագարակը:

Որդի մարդոյ է ցանողը սերմն բարի.
Որոմըն անպիտան են որդիք չարին.
Սերմըն բարի են որդիք արքայութեան.
Թշնամին որ վարեց զայն, է սատանան:

Աշխարհիս կատարածն ահեղ՝ է հունձքը
Եւ հնձողներն են սուրբ հրեշտակուները:
Ինչպէս կ'այրի կրակի մէջ որոմն ժողովուած,
Այնպէս կ'ըլայ աշխարհիս մեծ կատարածն:

Որդի մարդոյ հանէ պիտի իւր հօտէն
Հրեշտակներով զանոնք՝ որոնք չար գործեն.
Պիտի ձգէ զանոնք հնոց անշիջական,
Հոն յաւիտեան պիտի լան, ողբան, սգան:

¹ Մատթ. Ժ.Գ. 36—51:

Յայնժամ արդարք լուսաւորուին, կու գայ դող
Այն չարերուն. լսել կրցողն լսէ թող:
Արքայութիւն երկնից նման է դարձեալ
Այն գանձին որ՝ ագարակի մէջ ծածկեալ:

Գնելով զայն մարդը՝ ծածկէ հողի տակ,
Ուրախութեամբ կ'երթայ գնէ ագարակն:
Կամ նմանի վաճառական այն մարդուն,
Որ կը խնդրէ մարգարիտներ խիստ սիրուն:

Եւ գտնելով մէկ մարգարիտ պատուական,
Գնաց ծախեց ամենայն ինչ, գնեց զայն:
Կամ նմանի ուռկանի ի ծով ձգուած,
Ազգեր ժողովուած բազմաթիւ ամէն դիաց:

Երբ որ ուռկանն լեցուեցաւ, հանեն ցամաք,
Հոն տեղ նստան, ջուկեցին լաւերն արագ.
Լաւերն դրին ամանի մէջ քովէ քով,
Առին գէշերն, նետեցին դուրս շուտով:

Այսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը,
Հրեշտակներ մտնելով արդարոց մէջը,
Ջանոնք պիտի առնուն, չարերն ձգեն հնոց,
Հոն պիտի լան ողբան ի կրրակ, ի բոց:



ԻԸ. ՏԱՂ

Գլխատումն Յովհաննու Մկրտչի:

Բռնեց կապեց Հերովդէս՝ Թագաւոր ժանտ՝
Սուրբն Յովհաննէս Մկրտիչ դրաւ ի բանտ,
Հերովդիս իւր անօրէն կնոջ համար,
Զի Յովհաննէս կըսէր անոր անդադար:

Ինչո՞ւ եղբօրդ կինն կնութեան առիւր դու:
Հերովդիս պահէր ո՞ր մեծ Յովհաննու,
Կ'ուզէր զարդարն ըսպանանել չարաչար,
Բայց իւր խորհուրդն հանել գլուխ չէր կրնար:

Զի Հերովդէս Յովհաննէսէ կը վախնար,
Զինքը գիտէր ամէն մարդէ սուրբ, արդար:
Շատ քաղցրութեամբ լսէր կանսար անոր միշտ
Եւ շատ բաներ հնազանդելով կ'ընէր ճիշտ:

Հերովդէսի ծննդեան տօնն էր եկած,
Ընթրիք տուաւ մեծամեծ նախարարաց:
Հանդիսի մէջ իւր մէկ աղջիկն խաղաց պար,
Հերովդէսի հաճոյ եղաւ անսպառ:

Խնդրէ ինծմէ վստահ, ըսաւ իւր աղջկան,
Ինչ որ կ'ուզես կու տամ քեզի անխափան:
Անոր երգուաւ հաստատ, կրկնեց շատ անգամ:
Թագաւորութեանս կէսն թէ ուզես կու տամ:

Ելաւ զնաց փութով առ մայրն իւր աղջիկ.
Ի՞նչ ուզեմ իմ հօրմէս, ըսաւ, իմ մայրիկ:
— Մայրըն պատասխանեց. Գրնա՞ ուզէ՞ դու,
Բեր ինծի հոս շուտով գլուխն Յովհաննու:

Դարձաւ եկաւ Թագաւորին շոյտ նորէն,
Անոր յայտնեց իւր չար խորհուրդն անօրէն.
Կ'ուզեմ, ըսաւ, որ այս ըսկրտեղ վրայ
Յովհաննու Մկրտչին գլուխն տաս հիմայ:

Տրտմեցաւ, սխալեցաւ անի չարաչար,
Բայց իւր կոչնականաց եւ երգմանց համար
Զուզեց իւր աղջկան խնդրուածքն անարգել,
Հրամայեց փութով դահիճ առաքել:

Դահիճն եկաւ զՅովհաննէս գլխատեց
Մինչ նա նստէր լռիկ մնջիկ բանտի մէջ.
Անոր գլուխն բերաւ տուաւ աղջկան,
Աղջիկն ալ տուաւ մօրն ըսկտեղի վրան:

Երբ Յովհաննու աշակերտք զայս լսեցին,
Առին մարմինն իրենց սուրբ վարդապետին.
Եւ շատ տրտմեցան, լացին ողբացին,
Տարին զինքն Թաղեցին մէջ գերեզմանին:

ԻԹ. Տ Ա Ղ

Յիսուս հացը կը բազմացնէ:

Յիսուս առաւ առաքեալներն առանձին¹,
Բեթսայիդայ մեծ անապատն գնացին:
Երբ իմացան դացին բազում մարդիկներ.
Մա փրկութեան ճամբան անոնց սորվեցներ:

Օրուան պայծառ լոյսըն քաղուիլ ըսկըսաւ.
Ըսին առաքեալք. Թող ժողովուրդն շտապաւ,
Երթան քաղաքն, գնեն իրենց կերակուր,
Իւրաքանչիւր ուտէ մինչեւ ցըյադուրդ:

Յիսուս ըսաւ. Ասոնց ուտել տուէք դուք:
Ըսին. Հինգ նրկանակ ունինք, երկու ձուկ.
Երթանք ժողովրդեան գնենք շատ պարէն,
Ձի էին աւելի շատ հինգ հազարէն:

¹ Ղուկ. Թ. 10—17:

Ըսաւ անոնց Յիսուս. Ժողովուրդն նստի
Յիսնական դաս խոտի վըայ արօտի:
Առաւ հինգ նրկանակն եւ երկու ձկեր,
Օրհնեց զայն նայելով երկինքըն ի վեր:

Կտրեց տուաւ զանոնք իւր աշակերտաց,
Բաժնեն ժողովրդեան այնպէս խռընթաց,
Կերան եւ յագեցան ամէնք զարմացած,
Աւելցաւ տասներկու զամբիղ ի մասանց:



Լ. Տ Ա Ղ

Յիսուս ծովու վրայ կը քալէ:

Ժողովուրդն թողլով՝ Յիսուս ելաւ լեռն¹,
Հոն առանձին կ'ընէր Հօր իւր աղօթքներն:
Իրկուն էր առաքեալք նաւով կ'երթային,
Ելաւ յանկարծակի փոթորիկ ուժգին:

Չորրորդ ժամուն քալէր Յիսուս ծովուն վրան.
Երբ զինք տեսան աշակերտներ, խռովեցան.
Անոնք սուտ երեւոյթ զայն կը համարեն,
Բարձրը ձայնիւ պոռալ կը սկըսին վախէն:

Մեր Տէրըն խօսեցաւ անոնց հետ արագ.
Արի եղէք, ըսաւ, ես եմ, մի վախնաք:
Պետրոս ըսաւ. Թէ դուն ես Տէր, հրամայեա,
Որ զամ քեզի շուտով ջրերու վրայ:

¹ Մատթ. Ժ. Դ. 23—34:

Գնաց, բայց տեսնելով սաստիկ հոլմն՝ վախցաւ,
Կ'ընկըղմէր, պոռաց. Տէր, փրկէ զիս շտապաւ:
Բռնեց անոր թեւէն Յիսուս զըթառատ.
Ինչո՞ւ երկմըտեցար, ըսաւ, թերհաւատ:

Հանդարտեցաւ, երբ նաւ մտան՝ հոլմն սաստիկ,
Եկան անոր երկիր պազին այն մարդիկ,
Խոնարհելով առջեւն ինկան Յիսուսին.
Արդարեւ Աստուծոյ Որդի ես, ըսին:



ԼԱ. ՏԱՂ

Քանանացի կինը:

Գնաց Յիսուս Տիւրոսի, Սիդոնի կողմեր¹,
Ահա Քանանացի կին մեղաճ կանչէր.
Ողորմէ, գթա՛ ինձ, Տէր, Որդի Դաւթի,
Աղջկերս չարաչար դեւէն չարչարի:

Նա չպատասխանեց կնոջն այլազգի:
Ըսին իւր աշակերտքը վաղվաղակի.
Կը պոռայ անդադար, արձակէ զինքը:
— Եկայ Դարայէլի կորսուած խաշնէքը

Ազատելու, ըսաւ Յիսուս մեր Փրկիչ:
— Կինը երկրորդադէր, պոռար. Օգնէ՛ ինձ:
— Նա ըսաւ. Զէ աղէկ, առնուլ տղոց հաց
Եւ նետել անպիտան շներու առաջ:

¹ Մատթ. ԺԵ. 21—29:

— Կինը պատասխանեց, ըսաւ. Այո՛ Տէր,
Քանդի կերակրուին եւ նոյն իսկ շներ
Փշանքներէն իրենց տիրոջ սեղանին,
Առատապէս ամէն օր միշտ կը յագին:

— Այն ժամանակ կրկնեց Յիսուս. Ով կին դու,
Ճշմարիտ կըսեմք քեզ, մեծ է հաւատք քու.
Ըլայ քեզի ինչպէս որ կամենաս դուն:
Բըժշկուեցաւ անոր աղջկն նոյն ժամուն:



ԼԲ. Տ Ա Ղ

Այլակերպութիւն Յիսուսի:

Յիսուս կ'առնու ըզՊետրոս վեց օրէն ետք¹,
ԸզՅակոբոս, ըզՅովհաննէս իրեն հետ.
Հանեց զերենք մէկ բարձրը լեռ առանձին,
Հոն այլակերպ եղաւ անոնց առաջին:

Իւր ըզգեստներն եղան ձիւնի պէս ճերմակ,
Ինչպէս մարդիկ ընել չեն կարող անանկ:
Երեւեցան անոնց, խօսէին ահա
Յիսուսի հետ Մովսէս, մէկայն Եղիա:

Պատասխանեց Պետրոս, ըսաւ. Վարդապետ,
Աղէկ է ըլլանք հոս իժիր քեզի հետ.
Շինենք քեզ, Մովսէսի երկու մեծ վըրան,
Եղիայի ալ հատ մ'իրարու նըման:

Վասն զի չէր գիտեր ինչ ինք կը խօսէր,
Եւ զարհուրած, վախցած էին զարմացեր:
Յերկնից յանկարծակի ամպ մ'եկաւ թըռաւ,
Անոնց վըայ կեցաւ եւ զով շուք ըրաւ:

¹ Մարկ. Թ. 1—7:

Ամպին մէջէն եկաւ բարբառ ահաւոր.
«Ատիկայ է Որդիս, ըսեցէք ատոր:»
Յոյն վայրկենին ասդին անդին նայեցան,
Ոչ զոք տեսան հոն, բայց ըզՅիսուս միայն:

Աշակերտներ լեռնէն կ'իջնային մինչդեռ¹,
Պատուիրեց Տէրըն մեր անոնց խիստ պատուէր,
Որ այն տեսին մէկու մ'ընաւ չպատմեն,
Մինչեւ որ յառնէ ինքը մեռելներէն:

Հարցուցին Յիսուսի անոնք անյապաղ.
Ինչո՞ւ կ'ըսեն պիտի գայ Եղիա նախ:
Ըսաւ Յիսուս անոնց. Եղիա կու գայ,
Ամէն բան պատրաստէ պիտի անիկայ:

Այլ ես կ'ըսեմ ձեզի, Եղիա եկաւ
Եւ մարդիկ չուղեցին զինք ճանչնալ բնաւ.
Ըրին անոր մեղօք գիշութիւն պէս պէս,
Որդի մարդոյ պիտի մեռնի ալ նոյնպէս:

Այն ատեն աշակերտք խօսոյն հասկըցան,
Թէ խօսքն էր Յովհաննու Մկրտչի վըրան,
Որ Հերովդէս Թադաւորէն ինկաւ բանդ,
Գառնուկի պէս հեզիկ տարուեցաւ ի սպանդ:

¹ Մատթ. Ժ. 9—13:



ԼԳ. ՏԱՂ

Թէ ո՛վ է մեծ:

Առաքեալք շատ խիստ վեճէին ճամբու վրայ¹,
Թէ ո՞վ իրենց մէջէն պիտի մեծ ըլլայ:
Գիտցաւ Յիսուս անոնց խորհուրդը ծածուկ,
Բերաւ կեցուց անոնց մէջը մէկ մանուկ:

Ըսաւ անոնց. Զասի ով որ կ'ընդունի,
Անուամբս կ'ընդունի ալ զիս սրտիւ բարի.
Զիս ընդունողն կ'ընդունի զիս զըկողն ալ.
Ձեր ամենէն պզտիկն պէտք է մեծ ըլլալ:

Մ'արհամարհէք այն անմեղ փոքրիկ տըղաք²,
Զի եկայ ես տալու իրենց մեծ փրկանք.
Անոնց սուրբ հրեշտակներն հանապազօր
Կը տեսնեն երեսն հզօր հօրս երկնաւոր:

¹ Ղուկ. Թ. 46—49:

² Մատթ. ԺԸ. 10—14:

Եթէ մէկը ունենայ հարիւր ոչխար,
Եւ մոլորի անոնցմէ մին չարաչար,
Ձի՞թ թողուր հոն մէկալ իւր ոչխարներն.
Կ'երթայ զանի կը փնտրուէ փութով լեռն:

Երբ գտնէ զանիկայ շատ ուրախ կ'ըլլայ
Քան մէկալ չկորսուած ոչխարաց վըրայ:
Այսպէս չ'ուզեր բընաւ իմ երկնաւոր Հայր,
Որ մէկն այս փոքրիկներէն կորսուի մոլար:



ԼԴ. ՏԱՂ

Ընկերը յանդիմանելու եւ անոր մեղքերը թողլու
վրայ:

Կշտամբէ՛ առանձին սիրով քու եղբայր՝¹
Երբ մեղանչէ՝ թէ քեզ լսեց՝ շահեցար.
Եթէ չսէ՝ առ քեզ վկայ երկու,
Ամէն բան անոնցմով է հաստատելու:

Իսկ եթէ անոնց եւրս մտիկ չընէ,
Եկեղեցւոյ ըսէք, մեծ պատիժ դընէ.
Եթէ եկեղեցւոյ չսէ հաստատ,
Թող ըլլայ հեթանոսի պէս անհաւատ:

Երկրի վերայ, կ'ըսեմ ձեզ ճշմարտապէս,
Ինչ որ կապէք, կապուի երկինքըն ալ ձեզ.
Եւ երկրի վրայ թողուք դուք ինչ որ՝
Թողուի նաեւ երկինքը՝ հանապազօր:

¹ Մատթ. ԺԸ. 15—23:

Եթէ դուք մի ըլլաք երկրի վերայ,
Ինչ որ խնդրէք Հօրմէս՝ ձեզ պիտի ըլլայ:
Ուր ժողովուած են անուամբս երկու կամ երեք,
Հոն եմ ես, չեմ մեկնիր, չեմ երթար երբեք:

Պետրոս ըսաւ. Բանի՞հեղ պակսի ընկերս,
Որ թողում իրեն ես. ե՞՞թըն անգամ, Տէր:
— Ոչ եթէն անգամ, ըսաւ Յիսուս բարեխնամ,
Այլեւ եթանասուն ու եթէն անգամ:



ԼԵՏԱՂ

Մեղաւոր կին մը:

Յիսուս մինչ կ'ուսուցանէր ի տաճարի¹,
Եկաւ իրեն լսելու ժողովուրդն բարի:
Փարիսեցիք, դպիրք, քահանայք բերին
Կեցուցին Տեառն առաջ մեղաւոր մէկ կին:

Եւ ըսին. Վարդապետ, այս կինս յայտնապէս
Է շնացած: Գրէ մարգարէն Մովսէս,
Այսպիսիներ քարկոծ ըլնան չարաչար:
Արդ ի՞նչ կ'ըսես, խորհիս դուն ատոր համար:

Զայս կ'ըսեն անոնք որ փորձեն զանիկայ.
Իսկ նա մատով զրէր վար գետնի վրայ:
Յիսուս ըսաւ. Ձեր մէջէն անմեղ եղողն
Ատոր վրայ առաջին քարն նետէ թող:

¹ Յովհ. Ը. 1-11:

Դարձեալ վար նայելով կը զրէր գետինն,
Եւ ամէնք լսելով ելան գնացին.
Մնաց Յիսուս միայն եւ կինն առանձին,
Որ ցաւ ի սիրտ կայնէր անոր առաջին:

Կին դու, ոչ ոք, ըսաւ Յիսուս մարդասէր,
Դատապարտեց ըզքեզ: Կրկնեց կինն. Ոչ Տէր:
Ես ալ, ըսաւ Յիսուս, չեմ դատապարտեր,
Գնա՛ւ ասկից ետեւ ալ մի մեղանչեր:



ԼԶ. Տ Ա Ղ

Թէ կրնայ մէկն իր կինն թողուլ:

Յիսուս Հրէաստանի եկաւ սահմաններ¹,
Քարոզէր սորվեցներ, ինչպէս սովոր էր
Բարի Ժողովրդեան այնպէս խուռնընթաց,
Որ կը վազէր իրեն յամենայն կողմանց:

Փարիսեցիք եկան Յիսուսի հարցին.
Կրնայ մէկըն, ըսին, արձակել իւր կինն:
Կրկնեց Յիսուս. Ի՞նչ ձեզ պատուիրեց Մովսէս:
Մովսէս, ըսին, թողուլ հրաման տուաւ մեզ:

Պատասխանեց Յիսուս. Ձեզ զայն պատուիրան
Գրեց նայելով ձեր խտաւորութեան.
Այլ Աստուած ըսկզբէն արարածներուն
Արու, էգ ըստեղծեց անոնց բընութիւն:

Անոր համար պիտի թողու երիկը
Իւր հայրն ու մայր, երթայ առնու իր կնիկը.
Երկուքն ալ ըլնան պիտի մէկ մարմին.
Արդ Տէր զուգեց զերենք, մարդէ չբաժնուին:

¹ Մարկ. Ժ. 2—9.



ԼԷ. Տ Ա Ղ

Առակ Այգւոյն:

Երկնից արքայութիւն նման է մարդուն¹,
Որ վարձեց մշակներ դէմ առաւօտուն:
Կարեց անոնց վարձք օրը մէկ դահեկան,
Ղրկեց զանոնք յայգին իւր ժառանգական:

Երկրորդ ժամուն տեսաւ ի հրապարակ
Քանի մը մշակներ անգործ եւ դատարկ.
Ելէք զընացէք դուք ալ այգիս գործել,
Ըսաւ անոնց, կու տամ ձեզ ինչ որ վայել:

Վեցերորդ ժամուն նա գտաւ ուրիշներ,
Բոլորովին անգործ եւ պարապ կեցեր.
Պարապ, ըսաւ, բոլոր օրն կենաք ինչո՞ւ:
— Ոչ ոք, ըսին, զմեզ առաւ ի վարձու:

— Ելէք զընացէք դուք ալ այգիս գործել,
Ըսաւ անոնց, կու տամ ձեզ ինչ որ վայել:
Մետասաներորդ ժամուն ըրաւ նոյնպէս,
Կարգեց կարգադրեց իբրեւ բարւոք անտես:

¹ Մատթ. Ի. 1—16:

Երբ մտաւ արեգակն մար, եղաւ իրկուն,
 Կանչեց գաւառապետն՝ տեսուն իւր այգւոյն.
 Տուր, ըսաւ, մշակաց վարձքն աշխատութեան:
 Վերջինք եկան առին մէյ մէկ դահեկան:

Առաջինք կարծէին որ պիտ'առնուն շատ,
 Անոնք ընդունեցան նոյնպէս մէյ մէկ հատ.
 Սկսան տրտնջել տանտիրոջ վրայօք,
 — Թէ ի՞նչ չարասիրտ ես դուն եւ անողոր:

Մենք օրն ի բուն քրտամբ գործեցինք շոքին,
 Իսկ այդ վերջինք մէկ ժամ միայն գործեցին,
 Եւ զմեզ անոնց դուն ըրիր հաւասար:
 — Ըսաւ նա անոնցմէ մէկուն հեղաբար.

Չսակարկեցիր մէկ դահեկանի դուն.
 Ա՛ռ քուկդ գնա, կ'ուզեմ այդ վերջիններուն
 Տալ ինչպէս քեզ: Չունիմ իշխանութիւն ես
 Կարգադրել իրերս իմ ուղածիս պէս:

Այսպէս յետիններն պիտ' ըլլան առաջին
 Եւ առաջինները պիտ' ըլլան յետին.
 Վասն զի շատերն են բազմութեամբ կոչուեր,
 Ընտրուեր կարգեր են լիովին շատ քիչեր:



ԼԸ. ՏԱՂ

Առակ առ Փարիսեցիս:

Խօսեցաւ Տէր Յիսուս խօսքով առակի՝.
 Մարդ մը ցանդով պատած յարդարեց այգի,
 Հնձան շինեց, ըսաւ, եւ մեծ աշտարակ,
 Յանձնեց զայն մշակաց, գնաց օտար քաղաք:

Ղրկեց անոնց ծառայ երբ եկաւ քաղոց,
 Որ առնու անոնցմէ պտուղ ի ծառոց:
 Բռնեցին ծեծեցին անոնք չարաչար,
 Դարձուցին զանիկայ խայտառակաբար:

Դարձեալ զրկեց անոնց ուրիշ մէկ ծառայ,
 Զանի ալ գանակոծ ըրին անխնայ:
 Ուրիշ մ'զրկեց նորէն, զանի սպաննեցին
 Սաստիկ անգթաբար իրենց ձեռքն կացին:

Յետոյ առաքեց իւր մէկ հատիկ զաւակ.
 Թերեւս վախնան, ըսաւ: Երբ տեսան մշակք.
 Այս է ժառանգն, ըսին, եկէք սպաննենք,
 Որ վայելենք ամբողջ ժառանգութիւնն մենք:

Սպանին զանի, այգիէն հանին դուրս:
Ի՞նչ պիտ' ընէ տէրն այգւոյն, ըսաւ Յիսուս:
Պիտի գայ եւ տայ սպաննել զառնագին
Մշակներն. յանձնէ պիտի այլոց այգին:

Այն քարը զոր շինողք սեպեցին խոտան,
Կ'ըսէ սուրբ Գիլբըն, նա եղաւ զլուխ անկեան:
Անոնք լսելով զայս սրդողեցան շատ,
Ուզեցին բռնել, վախցան, թողին ազատ:

Բայց անոնցմէ ոմանք եկան չարադէտ
Եւ կեղծաւորութեամբ ըսին. Վարդապետ,
Գիտենք, չունիս մէկէն դուն ականածութիւն,
Սորվեցնես սուրբ ճամբան ճշդիւ ամենուն:

Կը խնդրենք ճշմարտիւ, ըսէ մեզի արդ.
Պէ՞տք ենք տալ վճարել Կայսեր հաս եւ հարկ:
— Նա թափանցեց անոնց չար կեղծ սրտին խորք.
Բերէք ինձի զրամ մ'ըսաւ, կեղծաւորք:

Անոնք բերին: Կրկնեց. Որո՞ն է պատկերն:
— Պատասխանեցին շոյտ եւ ըսին. Կայսերն:
— «Դացէք տուէք Կայսերն՝ Կայսեր անխափան,
Աստուծոյն՝ Աստուծոյ:» Անոնք զարմացան:



ԼԹ. Տ Ա Ղ

Որդի այրւոյն:

Կ'եւէր Յիսուս երկրորդ օր քաղաք Նային¹.
Աշակերտք ժողովուրդք մէկտեղ կ'երթային:
Երբ եկաւ մօտեցաւ քաղաքին դուռն,
Ահա կ'անցնէր մեռել մ' բաղմոլթեամբ խուռն:

Էր մէկհատիկ զաւակն իւր չքաւոր մօր,
Որ էր այրի բազում տարի սգաւոր:
Երբ տեսաւ զանի Տէր, ըսաւ զթաբար,
Ձի շարժեցաւ իւր սիրտն. Կին դու, մի՛ լար:

Նա եկաւ մերձեցաւ տղուն դադաղին,
Եւ զինքը տանողներն իսկոյն կանգ առին.
«Պատանի դու, ըսաւ, քեզ կ'ըսեմ ոտք ել:»
Ելաւ մեռելն փութով, սկսաւ խօսել:

Եւ Տէր Յիսուս տուաւ զանիկայ իր մօր:
Ամէնք վախցան, զԱստուած ըրին փառաւոր:
«Մեծ մարգարէ մ'ըսին, ելած է մեր մէջ,
Աստուած ժողովրդեան բարով այցեւեց:»

¹ Ղուկ. Է. 11—16:



Խ. Տ Ա Ղ

Յետին տեղը նստելու վրայ:

Ըսաւ Յիսուս վարդապետ մեր փրկիչ մեր
Ջայս առակ այն կոչնականաց փառասէր.
Նրբ կոչէ մէկըն զքեզ ի հարսանիս,
Զըլայ թէ դուն առաջին տեղը բազմիս.

Թերեւս կոչած է տանտէրըն ուրիշ մէկն
Պատուական քան զքեզ լաւ ու աղէկ.
Կոչնատէրն պիտ' ըսէ. « Տուր ասոր հիմակ
Տեղի: » Պիտի նստիս վերջը խայտառակ:

Եթէ կանչուիս՝ գնա նստէ ամէն հեղ
Խոնարհաբար ամենէն ցած յետին տեղն.
Իշխանաբար երբ զայ քեզ կոչող կոչնատէրն,
Ըսէ քեզի. « Բարեկամ իմ, հրամէ վեր: »

Այն ժամանակ պիտի ըլլայ արդարեւ
Քեզ մեծ պարծանք աթոռակցացող առջեւ:
Քանզի ով որ բարձրանայ՝ պիտ' խոնարհի.
Ով խոնարհի՝ պիտ' բարձրանայ յաշխարհի:

¹ Ղուկ. ԺԴ. 7—11:



ԽԱ. Տ Ա Ղ

Գթած Սամարացին:

Ահա ելաւ կեղծ վարուք մէկ դպրապետ¹,
Փորձէր Յիսուս, ըսաւ անոր. Վարդապետ,
Ի՞նչ ընեմ որ ժառանգեմ փրկութիւն մեծ:
Ըսաւ Յիսուս. Ի՞նչ կարդաս օրինաց մէջ:

Դպիրն ըսաւ. Պիտի սիրես Տէր Աստուած
Բոլոր սրտէ, յանձնէ, յամենայն մտաց.
Բոլոր զօրութենէ զինք պիտի սիրես,
Եւ քու ընկերդդ ալ նոյն իսկ անձիդ պէս:

Ծիշտ պատասխանեցիր, ըսաւ մեր փրկիչ.
Ըրէ զայդ, երջանիկ ես յաւիտենից:
Նրբ անիկայ ինք զինք կարդարացըներ,
Հարցուց Տեառն Յիսուսի. Ո՞վ է իմ ընկեր:

Կրկնեց Յիսուս դպրին ասանկ շատ սիրով.
Մէկն Նրուսաղեմէն կ'իջնար Նրիքով,
Աւազակներ զարկին թալեցին ահա,
Վերաւորեցին զինք, թողին կիսամահ:

¹ Ղուկ. Ժ. 25—38:

Քահանայ մ' կերթար նոյն ճամբէն ճեպընթաց,
 Զանի տեսաւ, անձայն անցաւ եւ գընաց
 Նոյնպէս Ղեւտացի մ' անկէ անցնելով՝
 Տեսաւ զանի, թողուց զնաց անգորով:

Մամարացի մ' եկաւ անցաւ նոյն տեղէն,
 Տեսաւ զանի, գթաց ի գութ մարդկեղէն.
 Պատեց վերքերն, դրաւ ձէթ, անոյշ գինի,
 Հեծուց տարաւ պանդոկ, դարմանեց զանի:

Միւս օրն երբ մեկնեցաւ դէմ առաւօտին՝
 Երկու դահեկան տուաւ պանդոկապետին.
 Հոգա՛, ըսաւ, ատի, ինչ որ ծախք ընես,
 Կը վճարեմ քեզի հոս դառնալուս պէս:

Արդ ո՞վ այս երեքէն եղաւ մերձաւոր
 Այն խեղճ մարդուն, թշուառ, շնչասպառ, անգոր:
 Ան ալ ըսաւ. Ով որ անոր գութ ցուցուց:
 Ըսաւ Յիսուս. Դընա՛ դուն ալ նոյն գութ ցոյց:



ԽԲ. Տ Ա Ղ

Մարթա եւ Մարիամ:

Յիսուս զնաց մինակ զիւղ մ' առաւօտուն¹.
 Կին մ' անուն Մարթա զինքն ընդունեցաւ տունն:
 Մարիամ անունով նա մէկ քոյր ունէր,
 Յիսուսի ոտքն նստաւ, լսէր սուրբ խօսքեր:

Եւ Մարթա գործերով շատ ըզբաղած էր.
 Եկաւ ըսաւ անոր. Հոգդ չէ բնաւ, Տէր.
 Այդ իմ քոյրս գործի մէջ զիս թողուց մինակ,
 Ըսէ որ օգնէ ինձ քիչ մը ժամանակ:

Մարթա Մարթա, կրկնեց Յիսուս եւ ասաց.
 Դուն հոգ կ'ընես եւ շատ բանով ըզբաղած.
 Բայց հոս մէկ բան միայն պէտք է փրկութեան:
 Մարիամ բարի մաս ընտրեց մշտական:

¹ Ղուկ. Ժ. 39—42:



ԽԳ. Տ Ա Ղ

Հարուստն եւ Աղքատը:

Հարուստ մ'կար, հագնէր ծիրանի եւ բեհեզ¹,
Ուրախ կ'ըլար ամէն օր առատապէս:
Ղաղարոս անուամբ մէկ աղքատ մը նոյնպէս
Անոր դուռն կենար վերաւորեալ անտես.

Անոր սեղանին փշտանքներ նա կ'ուտէր,
Ծներն ալ գային լիղէին իւր վերքեր:
Մեռաւ աղքատն, հրեշտակներ առին տարին
Աբրահամի Գոգն: Մահն եկաւ հարստին.

Աչուրներն վերցուց տանջանաց մէջ գժօխքը,
Տեսաւ Աբրահամ, Ղաղարոս իւր գոգը.
Կանչեց ըսաւ. Հայր Աբրահամ, ողորմէ,
Ղաղարոս զըկէ, լեզուս զովացընէ

Իր մատին ծայրով մէկ կաթիլ մը ջրով,
Ձէ պապակիւմ յոյժ աստ ի տանջանաց բով:
— Ըսաւ Աբրահամ, Յիշէ, որդեակ, բարիք
Անդին վայեցիր, Ղաղարոս ալ չարիք.

Արդ՝ ասի հոս մըխիթարուի անսպառ,
Դուռն տանջիս հող եւ պապակիս չարաչար.
Սակայն մեր եւ ձեր մէջ մեծ անդունդ մը կայ,
Իրարու անցնիլ չէ կարելի հիմայ:

— Ըսաւ հարուստն. Կ'աղաչեմ, Հայր Աբրահամ,
ԸզՂաղարոս զըկէ հօրս տուն մէկ անգամ.
Երթայ վկայէ, ունիմ հոն հինգ եղբայր,
Որ չգան իրենք ալ տանջանաց այս վայր:

— Աբրահամ զթով պատասխանեց իրեն.
Մովսէս, մարգարէք ունին, անոնց լսեն:
— Ոչ, ըսաւ նա, Հայր, եթէ մեռելներէն
Մէկն երթայ, ան ժամանակ կ'ապաշխարեն:

— Ըսաւ Աբրահամ անոր. Սուրբ Մովսէսին,
Եւ մարգարէից եթէ չհնազանդին,
Պիտի չհաւատան եւ ոչ մտիկ ընեն
Երբ մէկն յարութիւն առնէ մեռելներէն:



¹ Ղուկ. ԺԶ. 19—31:

ԽԳ. Տ Ա Ղ

Անառակ Որդին:

Յիսուս պատմեց. Մարդ մ'ունէր երկու որդիք¹.
Կրտսերն ըսաւ. Իմ բաժինս տո՛ւր ինձ, հայրիկ:
Երկու որդւոց ելաւ հայրն բաժնեց խնայն,
Տալով անոնց ինկած այն ժառանգութիւն:

Քանի մ'օրէն ժողկեց զնաց որդին կրտսեր,
Վատնեց զամէն. զի շատ գէշ վարքով կ'ապրէր:
Հոն օտար երկիր ինկաւ սով մեծ սաստիկ,
Ինքն ալ ըսկսաւ նեղուիլ, մուրալ հացիկ:

Քաղաքացւոյ մ'քով մտաւ ծառայութեան.
Գնաց անոր ազարակն արծել խողեան:
Ըստիպուած կ'ուտէր այն դառըն եղջիւրէն,
Զոր խողք կ'ուտէին. մէկն չէր տար բան մ'իրեն:

Խելք գալով գրուին ինքն իրեն ըսաւ.
«Ո՞րչափ ծառաներ բարիք վայլեն անբաւ
Իմ հօր տուն, ամէն օր կ'ուտեն միշտ ցըյադ,
Իսկ ես սովամահ պիտի լինիմ արագ:

¹ Ղուկ. ԺԵ. 11-24:

Ելեմ երթամ իմ հօրս ըսեմ փութապէս.
Հայր, մեղայ երկինքն, մեղայ հայր զթած քեզ.
Ա՛լ չեմ արժանի կոչուիլ որդիդ, մեղայ.
Ըրէ՛ զեւ հիմայ իբրեւ քու մէկ ծառայ:

Ելաւ եկաւ հօրն. երբ տեսաւ հայրն հեռուանց,
Վազեց փութապէս զնաց անոր զիմաց,
Համբուրեց զանի արտասուօք գրկելով,
Յոյց տուաւ իւր գութն ու հայրական գորով:

Որդին ըսաւ. Հայր, մեղայ երկինքն եւ քեզ,
Ա՛լ քու որդիդ կոչուիլ չեմ արժանի ես:
Հայրըն ծառայից ըսաւ անմիջապէս.
Բերէք ամէն ինչ պատրաստեցէք ի տես.

Հագցուցէք ատոր պատմուճանն առաջին,
Անցուցէք իւր ձեռքն փառաւոր մատանին.
Ոտից հագցուցէք փայլուն շքեղ կօշիկ,
Զարդուք զարդարուի եւ ըլլայ գեղեցիկ:

Բերէք մորթենք հոստեղ եզըն պարարակ,
Ուրախութեամբ ուրախ լինինք անբանակ.
Զի այս որդիս մեռած էր, կ'ապրի հիմայ,
Օտար երկիր կորսուած՝ զինքն այսօր գտայ:



ԽԵ. Տ Ա Ղ

Յիսուս Հովիւ քաջ:

Մեր փրկիչն ըսաւ. Ես եմ Հովիւն քաջ¹.
Քաջ Հովիւն իւր անձն զնէ վրայ ոչխարաց:
Հովիւ ճշմարիտ չէ վարձկանն անձնասէր,
Որուն՝ ոչխարներն չեն վերաբերեր.

Երբ կը տեսնէ որ գայլը կու գայ հեռուանց,
Թողու ոչխարն փախչի կ'երթայ շոյտ ի բաց.
Յափշտակէ գայլը զանոնք չարաչար,
Ձի վարձկան է, հոգն չէ ոչխարաց համար:

Ես եմ Հովիւ քաջ, ճանչնամ իմիններս ես
Եւ կը ճանչցուիմ հանապաղ իմիններէս.
Ինչպէս գիտէ զիս Հայր, եւ ես գիտեմ Հայր,
Եւ ինք զինքս կու տամ ոչխարներուս համար:

Ասկից զատ նաեւ ուրիշ ոչխարք ունիմ,
Ձանոնք ալ պիտի բերեմ ի փարախ իմ.
Իմ ետեւէս գան պիտի գիշեր եւ տիւ,
Պիտի լինին ի մի հօտ, ի մի հովիւ:

¹ Յովհ. Ժ. 11-17.



ԽԶ. Տ Ա Ղ

Թագաւորութիւն Բրիտոսի:

Յիսուս ըսաւ. Մարդ մ' գնաց օտար աշխարհ¹
Իւր Թագաւորութիւնն առնելու համար:
Կանչեց ծառայքն, տուաւ անոնց տաս մընաս,
Կու գամ, ըսաւ, յարգեցէք զայդ անպակաս:

Քաղաքացիքն ատէին զնա շատ անգամ,
Իր ետեւէն առաքեցին շոյտ պատգամ,
Եւ ասացին. Չենք ուզեր որ ատիկայ
Թագաւորէ իշխանաբար մեր վերայ:

Երբ գնաց առաւ իւր Թագաւորութիւն՝
Կանչեց քովն բաղմուծիւն իւր ծառաներուն
Տեսնել թէ ո՞վ ինչ իւր ստակէն ըրաւ շահ:
Տէր, քու մընասդ տասը մընաս բերաւ շահ,

Ըսաւ առջինն: — Կրկնեց Յիսուս. Ապրիս դու,
Ծառայ բարի, հաւատարիմ, զի ինչու
Քիչ բանի մէջ հաւատարիմ դու եղար,
Տաս քաղաքի իշխէ տիրէ տիրաբար:

¹ Ղուկ. ԺԹ. 11-28:

Քու մընասդ հինգ մնաս բրաւ, երկրորդն ասաց:
 — Իշխանութիւն ըլլայ քեզ հինգ քաղաքաց:
 Եկաւ միւսն, ըսաւ. Քու մնասդ ահա քեզ,
 Վախցայ քեզմէ, ծրարեցի, պահեցի ես.

Գիտէի որ ըստամբակ ես, վերցընես
 Քու չղբրածդ, չսերմանածըդ հնձես:
 — Ծառայ վատ թէ ստամբակ եմ, գիտէիր դու,
 Վերցընեմ եւ հնձեմ առանց ցանելու.

Ինչո՞ւ շահու չղբրիր այդ իմ ըստակ,
 Տոկոսով ես պահանջէի զայդ հիմակ:
 Ըսաւ ծառայից. Առէք ատկէ զմնաս,
 Տուէք անոր որ ունի մընասըն տաս:

Ըսին անոր. Տէր, տաս մընաս արդէն ունի:
 — Կ'ըսեմ ձեզ, ունեցողին տրուի պիտի.
 Իսկ անիկայ որ չունի եւ ոչ մէկ բան
 Իր ունեցածն ալ պիտ' առնուի անխափան:

Սակայն այն իմ չարանենդ թշնամիներ,
 Որոնք որ զիս թաղաւոր չէին ուզեր,
 Բերէք առջեւս, ըսպանէք հոս խայտառակ:
 Զայս ըսելով սուրբ քաղաքն ղիմեց արագ:



ԽԷ. Տ Ա Ղ

Յիսուս Երուսաղէմ կը մտնէ:

Երուսաղէմ մօտեցան կամաց կամաց,
 Հասան Բեթփաղէ մօտ լերան Չիթենեաց,
 Երկու աշակերտներ ղրկեց Յիսուս, ասաց.
 «Գնացէք այն գիւղը, որ կայ ձեր դիմաց.

Հոն կը գտնէք էշ մ'իրեն հետ յաւանակ.
 Քակեցէք զանոնք, բերէք ինծի արագ:
 Թէ մէկն ըսէ բան մը. Տիրոջն են պիտոյ,
 Ըսէք դուք անոր եւ կը ղրկէ յետոյ:»

Բայց այս ամէն բան եղաւ, որ կատարուին
 Զաքարիայ խօսքերն՝ սուրբ մարգարէին.
 «Սիրով աղջըկան տըռէք, ըսաւ, իմաց²,
 Ահա թաղաւորդ գայ հեղիկ էշ նստած:»

Եւ աշակերտներն գնացին նոյն հետայն,
 Կատարեցին շոյտ Յիսուսի հրամանն:
 Բերին էշն եւ իւր յաւանակն ըշտապաւ,
 Տարածեցին վրան ըզգեստներն եւ նստաւ:

¹ Մատթ. ԻԱ. 1—13:

² Եսայ. ԿԲ. 11:

Շատ ժողովուրդներ տարածեցին ճամբան
 իրենց ըզգեստներն առ սաստիկ խնդութեան,
 Ամէնք ծառերէ ոստեր կը կտրէին,
 Տարածէին ճամբուն վրայ իւր չորս դին:

Առջեւէն ետեւէն ժողովուրդն կ'երթար,
 Յնժութեամբ կը պոռար, կանչէր անդադար.
 «Օրհնութիւն որդւոյ Դաւթի մարգարէին,
 Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, փառք հզօր էին:»

Երբ մտաւ Յիսուս Երուսաղէմ՝ քաղաք,
 Ամէնք ոտք ելան եւ կ'ըսէին ասանկ.
 «Սա է Մեսիան Յիսուս մեր մարգարէն
 Դաւիթեացոյ այն Նաղարէթ քաղաքէն:»



ԽԹ. Տ Ա Ղ

Յիսուս Կոյր մը կը բժշկէ:

Տեսաւ Յիսուս կոյր մ'ի ծնէ երբ կ'անցնէր¹.
 Հարցին անոր եւ ըսին աշակերտներն.
 Որո՞ն է յանցանքը, Վարդապետ, ասո՞ր,
 Որ կոյր ծնի, թէ պարզապէս իւր հօր, մօր:

— Յիսուս կրկնեց. Ո՛չ ատոր եւ ո՛չ հօր մօր
 Յանցանքն է, այլ զի Վերնոյն գործքն այսօր
 Կատարուի ատոր վրայ եւ պէտք եմ ես
 Զիս զըկողին գործքն կատարել յայտնապէս:

Մինչդեռ ցերեկ է, կու գայ յետոյ գիշեր,
 Յայնժամ չեն կարող գործել բնաւ մարդիկներ,
 Մինչ այս աշխարհիս մէջ եմ ես հիմակու
 Լոյս եմ աշխարհի լոյս պայծառ լուսատու:

Զայս ասելով՝ կաւ շինեց թ.քաւ գետին,
 Եւ ծեփեց ըզկաւն աչաց վերայ կուրին.
 Ըսաւ զնա՛, լուացուէ ջուրն Սելովմայ.
 Գնաց լուացուեցաւ, եկաւ տեսնէր նա:

¹ Յովհ. Թ. 1—38:

Ասանկ կ'ըսէին զինքն տեսնող զըրացիք.
 Ձէ՞ ասիկայ նա, որ նստէր մուրացիկ:
 Ոմանք կ'ըսէին ան է, իսկ ուրիշներ
 Թէ ոչ, այլ նման է. ինքն ես եմ կ'ըսէր:

Ըսին անոր. ի՞նչպէս քո աչեր բացան:
 — Մէկն, ըսաւ, որուն Յիսուս անուն կու տան,
 Կաւով ծեփեց աչերս, ըսաւ. Գնա լուա:
 Դացի լուացուեցայ, կը տեսնեմ ահա:

— Ըսին անոր. Ո՞ւր է նա, ըսէ դու մեզ:
 — Պատասխանեց եւ ըսաւ. Չըզիտեմ ես:
 Տարին զանի Փարիսեցւոց կեղծաւոր.
 Բըժշկութիւնն կատարուած էր շաբաթ օր:

Դարձեալ հարցին խորամանկ Փարիսեցիք,
 Թէ ի՞նչպէս դուն կը տեսնես պայծառ այժմիկ:
 — Կաւով ծեփեց իմ աչեր, լուացուեցայ,
 Եկայ ես, ըսաւ եւ կը տեսնեմ ահա:

Նա չէ յԱստուծոյ, կ'ըսէին ուրիշներ.
 Վասն զի շաբաթ օրեր սուրբ չի պահեր:
 Ոմանք կ'ըսէին. ի՞նչպէս հնար է արդ,
 Որ գործէ այդ մեծ հրաշքներ մեղաւոր մարդ:

Ըսին կուրին. Անոր համար ի՞նչ կ'ըսես:
 — Մէկ մեծ մարդարէ, կրկնեց արագապէս:
 Հրեայք չէին հաւատար անոր վըայօք,
 Թէ բացուեցաւ. կանչեցին անոր ծնողք:

Սա՞ է ձեր որդին, հարցին անոնց շտապաւ,
 Ի՞նչպէս տեսնէ, որ կ'ըսէիք կոյր ծընաւ:
 — Պատասխանեցին անոր ծնողքն եւ ըսին.
 Դիտենք որ միշտ կոյր ծնաւ այդ մեր որդին:

Բայց թէ ի՞նչպէս հիմայ տեսնէ՝ չենք զիտեր,
 Կամ ո՞վ բացաւ, չենք զիտեր, ատոր աչեր.
 Ատոր հարցէք, չափահաս ինքն է արդէն,
 Թող ինքն խօսի, ինքն անձամբ ազատօրէն:

Ձայս ըսին իւր ծընողք, զի վախնային շատ,
 Չար Հրեաներ ուխտ դրած էին հաստատ,
 Թէ ով ըզՅիսուս՝ Բրիստոս խոստովանի,
 Ժողովըդենէն պիտի մերժուի անի:

Դարձեալ կանչեցին զանի՝ որ յառաջ կոյր.
 Մեղաւոր է նա, ըսին, Ասծոյ փառք տուր:
 — Թէ մեղաւոր է՝ չեմ զիտեր, կրկնեց շոյտ,
 Բայց զիտեմ, կոյր էի, այժմ տեսնեմ ստոյգ:

Դարձեալ հարցին. ի՞նչ ըրաւ, ի՞նչպէս տեսնես:
 — Պատասխանեց անոնց. Հիմայ ըսի ձեզ
 Եւ չըլսեցիք. կ'ուզէք միթէ դուք ալ
 Այն մարդարէին աշակերտներն ըլլալ:

— Անոնք զանի հայհոյէին, կ'ըսէին.
 Դուն եղիր, մենք ենք աշակերտք Մովսիսին:
 Մովսէսի հետ երեւեցաւ Տէր Աստուած.
 Ձասի չենք զիտեր ուստի՞ է, որ դիպց:

— Այդ իսկ սքանչելիք է, պատասխանեց նա,
Որ դուք չէք գիտեր ուստի է, լուացայ.
Գիտենք մեղաւորաց չի լսեր Աստուած,
Այլ անոնց՝ որ կ'անսան անոր սուրբ կամաց:

Ի յաւիտենից ոչ ոք է բնաւ լսեր
Թէ մէկն ծնէ կոյր ծնողին բացաւ աչեր.
Եթէ յԱստուծոյ չէր արդարեւ մարդն ան,
Ինքըն չէր կարող ընել եւ ոչ մէկ բան:

— Ըսին անոր, ի մեղս ծընած ես բնաւին,
Վարդապետ մեզ կը լինիս: Եւ դուրս հանին:
Յիսուս լսելով՝ եկաւ անոր ասաց.
Դուն կը հաւատամ սրտիւ յՈրդին Աստուած:

— Ըսաւ նա. Ո՞վ է, որ հաւատամ ես, Տէր:
— Կրկնեց Յիսուս. Բեզ հետ խօսողն հիմայ դեռ:
— Հաւատամ տէր ըսաւ նա, այժմ եւ իժիւր,
Եւ յարգանք մեծ անոր պազաւ երկիր:



ԽԹ. Տ Ա Ղ

Տասն Կուսանք:

Արքայութիւնն նման է տասն կուսանաց¹,
Որոնք ելան փեսին, հարսին ընդ առաջ
Հապտերներով կազմ եւ պատրաստ զարդարուն,
Հինգը յիմար եւ հինգը շատ իմաստուն:

Յիմար կուսանքն առին լապտեր իրենց հետ,
Բայց մոռացան առնուլ ի միասին ձէթ.
Իսկ իմաստունքն իրենց հետ ձէթ ալ առին.
Փեսան յամեց, մըտան քուն: Կէս գիշերին

Ահա բարբառ. «Փեսան գայ, ելէք առաջ:»
Ամէնք առին լապտերներն ձեպրնթաց:
Յիմարքն ըսին իմաստնոց. Այդ ձեր իւղէն
Տուէք մեզի, մեր ջահեր կ'անցնին այժմէն:

¹ Մատթ. ԻԵ. 1—13:

— Իմաստունքն. Գուցէ բաւական չէ ձեզ եւ մեզ,
Գնացէք դուրս քաղաքէն զընեցէք ձեզ:
Յանկարծ եկաւ փեսան, ամէնք խուռըն խուռն
Մտան իրեն հետ ներս եւ փակեցաւ դուռն:

Յետոյ կու գան ըշտապաւ միւս կուսաններ,
Կաղաղակեն անդադար. Բայց, բայց մեզ Տէր:
Պատասխանեց. Ըստուգիւ ձեզ չըճանչնամ:
Արթնուն կեցէք, չըզիտէք ոչ օր, ոչ ժամ:



Ժ. Տ Ա Ղ

Փարիսեցին եւ Մաքսաւորն:

Այն սուտ արդար Փարիսեցւոց հակառակ¹
Յառաջ բերաւ Յիսուս Զրիստոս զայս առակ.
Փարիսեցի, մաքսաւոր, հոգի երկու
Դացին տաճարն միատեղ աղօթելու:

Փարիսեցին առանձինքն էր կեցեր
Եւ այս աղօթքը յատուկ մատուցանէր.
“Շընորհակալ կ'ըլամ շատ, Աստուած իմ քեզ,
Որ չեմ բնաւ մէկալ գէշ կեղտ մարդկանց պէս

Յափշտակող, անիրաւ կամ շնացող,
Մաքսաւորիս պէս յայտնի աւաղակ, գող.
Հապա պահեմ մէկ շաբաթ երկու անգամ,
Ունեցածէս տասանորդ սրտանց կու տամ:”

¹ Ղուկ. ԺԸ. 9—14:

Մաքսաւորն ալ առանձինն էր կեցեր
 Եւ ոչ կ'ուզէր ամբառնալ վեր իւր աչեր.
 Իւր կուրծքը կը զարնէր, կ'ըսէր անդադար.
 «Քաւեա դու զիս մեղաւորս, Աստուած արդար:»

Ըստոյդ կ'ըսեմ, ըսաւ Յիսուս ամենուն,
 Սա աւելի անկէ արդար դարձաւ տուն.
 Զի խոնարհի շոյտ ով որ կը բարձրանայ,
 Ով խոնարհի միշտ պիտի բարձրանայ նա:



ԺԱ. ՏԱՂ

Կատարած աշխարհի:

Երբ Յիսուս կ'ելէր դուրս Հրէից տաճարէն¹.
 Վարդապետ, ըսաւ մէկն աշակերտներէն,
 Ինչպիսի քարեր, ինչպիսի շինուածք են:
 — Նա պատասխանեց. Կը տեսնէ՞ք այդ ամէն,

Պիտի քակտուի, ցրուի Ժամանակ կու գայ,
 Պիտի չմնայ եւ ոչ քար քարի վրայ:
 Ձիթենեաց լեռն նորէն հարցին աշակերտք.
 Ե՞րբ պիտի լինի այդ ամէն հրաշակերտ:

— Պատասխանեց Յիսուս. ըզգոյշ կեցէք լաւ,
 Ձը լայ մարդիկներէն խաբուիք դուք բընաւ.
 Շատեր պիտի գան իմ անուամբս ստախօս
 Խաբելու ըզմարդիկ թէ՛ Նս եմ Բրիստոս:

Չվախնաք կը լսէք երբ պատերազմներ,
 Պէտք է այդ ըլլայ, բայց կատարած չէ դեռ:
 Բանգի ազգ ազգի, տէրութիւն տէրութեան
 Սրով սուսերով վրայ պիտի ելան:

¹ Մարկ. Ժ. Գ. 1—37:

Սով սրածուծիւն, երկիւղ ամէն դիաց
Պիտի լինի, այլ այդ սկիզբն է երկանց:
Ըզձեղ ալ պիտի տանին ի մեծ ատեան,
Պիտի տանջուիք շատ ի մէջ ժողովրդեան:

Թագաւորաց կայնէք պիտի դուք դիմաց
Վկայութիւն անոնց եւ Հեթանոսաց,
Սակայն պէտք է որ նախ սուրբ Աւետարան
Քարոզուի շոյտ ամէն աշխարհ անխափան:

Երբ որ մատնեն ըզձեղ մարդիկ անողոք
Զմտածէք թէ ի՞նչ խօսիք, չընէք հոգ.
Պիտի խօսիք ինչ որ տրուի նոյն ժամուն,
Զի զօրութեամբ պիտի խօսիք սուրբ Հոգւոյն:

Պիտի մատնէ ի մահ դառն եղբայր զեղբայր,
Գազանաբար հայր զորդի, որդի ըզհայր.
Պիտի լինիք դուք ատելի ինձ համար,
Եւ ան կապրի որ համբերէ մինչ ի սպառ:

Երբ կը տեսնէք աւերածին պղծութիւն.
Կարդացողն թող լսէ, ի մէջ սուրբ տեղւոյն,
Ան ժամանակ Հրէաստանցիք դէպ լեռ
Պիտի փախչին եւ երդիքն ըլտղները

Պիտի չիջնան տուն, առնուլ բան մ'արագ.
Զի դառնար ետ ով որ գտնուի ագարակ:
Բայց յըղիներուն վրայ պիտի գայ վայն,
Ըստնտուներուն նոյն օր միանգամայն:

Աղօթք ըրէք, չպատահի այն՝ ձմեռն,
Զարհուրելի պիտի ըլլան այն օրերն,
Ի սկզբանէ աշխարհի մինչեւ հիմայ
Զեղաւ այնպէս եւ ուրիշ պիտի չըլլայ:

Եթէ Աստուած չկարծէր այն գէշ օրեր
Իւր ընտրելոց համար՝ մէկ մարմին չապրէր:
Եթէ ըսէ մէկն ձեզի այն ժամանակ.
Ահաւասիկ Քրիստոսն է, մի հաւատար:

Պիտի ելլեն սուտ Քրիստոսներ չարաբար,
Խաբեն պիտի ընտրեալներն իսկ թէ հընար.
Բայց դուք եղէք ըզգուշաւոր, անասան,
Ահա յառաջ ըսի ձեզի ամէն բան:

Իսկոյն խաւարի պիտի արեգակը,
Պիտի չտայ իւր աղօտ լոյսն լուսնեակը.
Աստղներ յերկնից պիտի իյնան ի վայր,
Անդ զօրութիւնք պիտի շարժին չարաչար:

Յանկարծ պիտի տեսնէք ամպոց վրայ նստած
ԶՈրդի մարդոյ բազմեալ յոսկի գահ փառաց.
Իւր ընտրեալներ փութով ժողվելու համար
Հըրեշտակներն պիտի զըկէ յայս աշխարհ:

Թըզենիէն սորվեցէք դուք առակը
Անոր աղուոր փապուելու ժամանակը
Զքնաղ ամառուան կ'իմանաք եղանակն.
Այսպէս ալ երբ դուք կը տեսնէք կ'իմանաք

Այս նշաններն ամէն եղած կատարած՝
 Իմացէք որ մօտ է վերջին կատարած:
 Ճշմարիտ կ'ըսեմ, երկինք երկիր անցնին,
 Այս իմ խօսքեր կատարուին պիտի բնաւին:

Այլ նրկատմամբ այն ժամուն կամ այն օրուան
 Ոչ ոք գիտէ, ոչ Որդի, բայց Հայր միայն:
 Ըզգուշացէք, հսկեցէք, աղօթեցէք,
 Զի ժամանակն չէք կարող գիտնալ երբեք:

Ինչպէս մէկ մարդ օտար աշխարհ երթալով՝
 Թողու իւր տունն եւ ընտանիքն ի գորով.
 Իշխանութիւն կու տայ իւր ծառաներուն,
 Դռնապանին պատուէր տայ, ըլլայ արթուն:

Արթուն կեցէք արդ չէք գիտեր երբ տան տէրն
 Կու գայ, իրիկունն, առաւօտուն, թէ գիշերն:
 Զըլլայ թէ յանկարծ գտնէ ըզձեզ ի քուն.
 Արթուն եղէք միշտ, կ'ըսեմ ձեզ ամենուն:



ԾԲ. Տ Ա Ղ

Գալուստ Որդւոյ մարդոյ:

Որդի մարդոյ հրեշտակօք պիտի գայ՝,
 Պիտի նստի խիստ դատաւոր փառաց գահ:
 Ազգ եւ ազնիք պիտի ժողվուին իր առաջ
 Եւ բաժանէ զանոնք պիտի ի միմեանց:

Ինչպէս հովիւն իւր ոչխարներն յանուանէ
 Սէգ այծերէն աջակողմը զատանէ.
 Այսպէս ոչխարն աջակողմը ժողվէ պիտի,
 Իսկ այծերն ալ ջոկէ պիտի իւր ձախ դի:

Ինքն թագաւոր դիմօք հեզիկ ու սիրուն
 Պիտի ըսէ իւր աջակողմեաններուն.
 Եկէք օրհնեալք՝ ժառանգեցէք, իմոյ Հօր,
 Արքայութիւն երկնից անվերջ ամէն օր.

Ջի մինչ քաղցեայ, տուիք ինծի կերակուր,
 ծարաւեցայ, բերիք ինծի սիրով ջուր •
 Օտար էի՝ առիք զիս, մերկ ու բոպիկ,
 էի հիւանդ զիս տեսնելու դուք եկիք։”

Պիտի ըսէ ահադաճայն յոյժ այսպէս
 Ձախակողմեան խումբին • Գնացէ՛ք իմ քովէս
 Ի հունն անշէջ, ի բոց թշուառ կորստեան,
 Որ չար դիւին պատրաստուած է յաւիտեան։



ԺԳ. Տ Ա Ղ

Յարութիւն Ղազարու։

Ղազար անուն կար հիւանդ մ’ի Բեթանիա¹,
 Որ էր եղբայրն Մարթայի ու Մարեմայ։
 Իւր այս քոյրեր զըկեցին Յիսուսի մարդ •
 Ահա, ըսին բարեկամդ է յոյժ հիւանդ։

Լսեց Յիսուս հիւանդանայն Ղազարին,
 Բայց երեք օր կեցաւ իւր տեղ վշտազին։
 Յետոյ ըսաւ աշակերտացն ժրոջան •
 Եկէ՛ք երթանք փութանակի չրէաստան։

Աշակերտներն ըսին • Վատ ազգն այն չրէայ
 Մուգէր քարկոծ ընել զՔեզ դեռ հիմայ •
 Ինչո՞ւ նորէն երթալ հոն տեղ կը բաղձաս,
 Միշտ հոս կեցիր, որով մընաս անվընաս։

Մարդ թէ երթայ մութին մէջ ման գայ գիշեր,
 Միշտայ իսկոյն, քանզի լոյս չի նշմարեր։
 Ապա ըսաւ Ղազարոս բարեկամ մեր
 Ննջեց, երթամ արթնցընեմ կանգնեմ վեր։

¹ Յովհ. ԺԱ. 1—45։

Զարմանալով շատ ըսին աշակերտներ .
 Եթէ ննջեց՝ արդ ուրեմն կ'ապրի, դեռ :
 Ան ժամանակ ըսաւ Յիսուս յայտնապէս .
 Մեր Ղազարոս մեռաւ, ուրախ եմ շատ ես :

Որովհետեւ Որդի մարդոյ պիտի յոյժ
 Փառաւորութի առջեւն ազգին խաւաւով .
 Երաւ Յիսուս ի քաղաքն հեթանիս ,
 Գտաւ զՂազար ի շերմին չորեքօրեայ :

Հրեիցմէ եկած էին միսիթարելու
 ԸզՄարիամ, Մարթա քոյրեր Ղազարու :
 Երբ լսեց Մարթա Տեառնն Յիսուսի զալ՝
 Առջեւն ելաւ, տունն նստէր Մարիամ ալ :

Ըսաւ Մարթա . Տէր, թէ ըլլայիր դու հոս ,
 Զէր մեռած գացած եղբայրն իմ Ղազարոս .
 Այլ եթէ ընես ինձ համար մէկ խնդրուած ,
 Կու տայ ապահով քեզ Բարձրեալ Տէր Աստուած :

— Յիսուս ըսաւ . Պիտի յառնէ եղբայր քո :
 — Ըսաւ Մարթա . Յարութեան այն օրն այո :
 — Յիսուս . Ես իսկ եմ յարութիւն կենդանի ,
 Հաւատացողն ինձ չի մեռնիր բնաւ անի :

Մարթա . Հաւատամ , Տէր , թէ դուն Բրիստոնես ,
 Որ պիտի գայիր այս աշխարհ վրկել մեզ :
 Յետոյ կանչեց Մարիամ , ըսաւ այսպէս .
 Եկուր շուտով , Վարդապետը կ'ուզէ զքեզ :

Ես եկաւ ինկաւ ոտքն Փրկչին ու ասաց .
 Տէր դուն ըլլայիր հոս , եղբայրս չէր մեռած :
 Յիսուս տեսնելով անոր լայն վշտագին
 Եւ բարեկամներն որոնք դառն կու լային ,

Խռովեցաւ իբր զայրացած մեծապէս .
 Ո՛հր դրիք զանի : — Ըսին , Տէր , եկուր տես :
 Եղի ժամուն թափեց Յիսուս ջերմ արցունքներ :
 Հըրեայք կ'ըսէին . Տեսէք ինչպէս սիրէր :

Ոմանք ալ կ'ըսէին . Միթէ ասիկայ
 Զէր կարող ընել որ չմեռնի անիկայ :
 Եկաւ Յիսուս շատ տրտում ի գերեզմանն ,
 Որ էր այր մի , մէկ մեծ քար դրուած վրան :

Ըսաւ . Մէկ դի առէք քարն : Կրկեց Մարթա .
 Տէր , հոտած է , քանզի է չորեքօրեայ :
 Պատասխանեց . Զըսի՞ քեզ ես , ո՞վ կին դու ,
 Որ հաւատաս եւ տեսնես փառքն Աստուծու :

Գերեզմանին քարն երբ անոնք առին վեր՝
 Վերցուց Յիսուս դէպ երկինքն իւր աչուրներ ,
 « Հայր սուրբ , ըսաւ , քեզի կու տամ փառք հաղար ,
 Որ լսեցիր ինձ ամէն հեղ անդադար :

Ես գիտէի որ հանապաղ ինձ լսես ,
 Այլ քովս ժողովուած ժողովրդեան համար ես
 Կ'ընեմ այս բան , որ դաւանին հաւատան ,
 Թէ զրկեցիր դուն զիս , փրկանք տալ մարդկան : »

Զայս ըսելով կը կանչէ ձայնիւ ամուր.
 «Գերեզմանէն, Ղազարէ, դուրս ել եկուր:»
 Ելաւ մեռելն իւր ձեռքեր ոտքեր կապած,
 Վարչամակով ալ երեսն կրկին պատած:

Ըսաւ Յիսուս. «Քակեցէք դուք ատիկայ,
 Եւ թող տուէք ազատութեամբ տունն երթայ:»
 Հըրէիցմէ մեծ բազմութիւն մը մարդկանց,
 Որոնք էին եկած Հեռուանց Մարեմեանց,

Տեսնելով այս ամէն բան հաւատացին
 Յիսուսի Բրիստոսի մեր Տեառն եւ Փրկչին:
 Անոնցմէ ոմանք Փարիսեցւոյ գացին,
 Պատմեցին անոնց ըրածներն Յիսուսին:



ԾՊ. Տ Ա Ղ.

Յիսուս իւր Մահն կ'իմացնէ:

Երբ Յիսուս այս ամէն բան էր կատարած¹,
 Խօսեցաւ հեղութեամբ իւր աշակերտաց.
 Երկու օրէն, զիտէք դուք, Զատիկ լինի,
 Որդի մարդոյ խաչուելու պիտի մատնի:

Միատեղ ի սրահ նոյն ժամուն ժողվեցան
 Քահանայապետք եւ ծերք ժողովրդեան.
 Խորհուրդ ըրին հոն նենգութեամբ խորհուրդ չար,
 Բռնեն Յիսուս եւ ըսպաննեն չարաչար:

Թէ ցորենոյ հատն, կ'ըսեմ ձեզ ճշմարտիւ²,
 Զիյնայ, չմեռնի, ըսաւ Յիսուս մեր հովիւ,
 Ինքըն միայն առանձին կ'ապրի մէկ հատ,
 Բայց թէ մեռնի՝ կը բերէ արդիւնքներ շատ:

¹ Մատթ. ԻԶ. 1—5:

² Յովհ. ԺԲ. 24—26:

Ով մեղկութեամբ եւ թուլութեամբ կ'ապրի հոս՝
 իւր անձն պիտի կորսնցընէ դարահոս.
 Իսկ թէ նեղէ նեղութեամբ հոս իր մեղկ անձն՝
 Պիտի վայել Արքայութեան անգին գանձն:

Անի որ զիս ճշմարտապէս է պաշտող՝
 իմ օրէնքներ եւ իմ խօսքեր պահէ թող.
 Ուր ես եմ պիտի ըլլայ իմ պաշտօնեայ,
 Ով զիս պաշտէ՝ Հայրս կը պատուէ զանիկայ:



ԺԵ. Տ Ա Ղ

Վերջին Ընթրիք Բրիստոսի:

Ղրկեց Յիսուս ըզՅակոբոս, Յովհաննէս¹.
 « Գացէք, ըսաւ, պատրաստեցէք զատիկն մեզ:
 Մտէք քաղաքն փութանակի ձեր դիմաց,
 Տեսնէք պիտի մէկ մարդ իւր փարջն ուսն առած:

Ետեւէն գացէք տունն, տանտիրոջն ըսէք.
 Վարդապետ կ'ըսէ քեզ. Ուր ուտեմ պասէքն:
 Պիտի ցուցընէ ձեզ մէկ մեծ վերնատուն
 Զարդերով զարդարուած շքեղ զարդարուն:»

Անոնք գացին գտան ինչպէս էր ըսած,
 Պատրաստեցին զատիկն Բաղարջակերաց:
 Յիսուս՝ երբ պայծառ լոյսն քաղուեցաւ օրուան²,
 Աշակերտներուն հետ նստաւ ի սեղան:

Անոնք մինչդեռ նստած ճաշակէին հաց.
 Մէկը պիտի մատնէ զիս, Յիսուս ասաց:
 Տրտմեցան, խռովեցան շատ աշակերտներ,
 Ամէնքն ըսկան ըսել. Մի՞թէ ես եմ, Տէր:

¹ Ղուկ. ԻԲ. 8—13:

² Մատթ. ԻԶ. 20—30:

— Ով ինձի հետ խոթեց ձեռքն ի սկաւառակ,
 Ըսաւ Յիսուս, նա զիս պիտ' մատնէ արագ:
 Ինչպէս զրուած է Որդի մարդոյ կերթայ,
 Բայց պիտի դայ այն մարդուն անէծք եւ վայ,

Որուն ձեռք որ Որդի մարդոյ մատնի.
 Լաւ էր թէ բնաւ չէր իսկ ծնած անի:
 Միթէ ե՞ս եմ, վարդապետ, ըսաւ Յուդա:
 — Պատասխանեց Յիսուս. Դուն ըսիր հիմայ:

Առաւ օրհնեց հացն, տուաւ աշակերտաց.
 “Ա՛հ-է՛+ կերէ՛+, այ՛ է մարմին իմ,” ասաց:
 Բաժակն առաւ, օրհնեց, տուաւ խնդազին.
 “Արբէ՛+ է մահնէ, ըսաւ, ամենեւին,

Վա՛նդի այդ է արիւն իմ նորոյ ուրախ,
 Որ մեղաց թողութեան համար հեղանի:
 Օրհնեցին զոհութեամբ ամէնք սուրբ սեղանն
 Եւ իրիկունն Ձիթենեաց լեռն գացին ելան:



Ծ. Զ. Տ Ա Ղ.

Յիսուս Գեթսեմանի պարտէզին մէջ:

Ան ժամանակ Տէրն Յիսուս կ'առնու տանի՝
 Աշակերտներն ի պարտէզն Գեթսեմանի,
 Կ'ըսէ անոնց. Դուք նստեցէք քիչ մը հոտ,
 Մինչեւ աղօթքի քիչ մը կենամ ես մօտ:

Առաւ մէկտեղ Պետրոս, Զեբեդեայ որդիք,
 Եւ ըսկաւ տրտմիլ, հոգ ընել սաստիկ:
 Ըսաւ անոնց. Տրտում է հոգիս մինչ մահ,
 Կեցէք հոս, հսկեցէք լուրջ ինձի հետ պահ մ':

Քիչ մ' յառաջ գալով ինկաւ վրայ երեսաց,
 Ժունըր զրաւ աղօթելով՝ զայս ասաց.
 “Անցնի ինձմէ այս բաժակ եթէ հընար,
 Բայց ոչ իմ, այլ քու ուզածըդ ըլլայ, Հայր:”

Դայ աշակերտաց, գտնէ զանոնք ի քուն.
 Զկրցա՞ք, կ'ըսէ, մէկ ժամ կենալ արթուն:
 Արթուն կեցէք, աղօթք ըրէք եռանդուն,
 Որ չիյնաք չարաչար ի չար փորձութիւն.

Հոգւոյն բնութիւնն հանապազ է յօժար,
Մարմնոյն բնութիւնն սակայն միշտ է տկար:
Երկրորդ անգամ աղօթեց խոնարհաբար.
«Անցնի ինձմէ, ըսաւ, Հայր, եթէ հընար,

Այս դառնազին բաժակ զոր տաս ինձի դու,
Ապա թէ չէ, խմեմ զայս, ըլլայ կամք քու:»
Յորէն եկաւ նա քով աշակերտներուն,
Գտաւ զանոնք արդէն նիրհած ի խոր քուն:

Երրորդ անգամ գնաց կեցաւ աղօթքի
Եւ նոյն խօսքերն ըսաւ ի ժամ երկրորդի:
Յետոյ եկաւ աշակերտաց եւ ըսաւ.
«Քնացէք դուք, հիմայ հանգիստ առէք լաւ:

Ահա հասաւ ժամանակն երազընթաց,
Որդի մարդոյ պիտ' մատնի ձեռքս չարաց.
Ելէք երթանք փութանակի ասկէ թող,
Ահաւասիկ եկաւ հասաւ զիս մատնողն:»



ԾԷ. Տ Ա Ղ

Յուդա զՔրիստոս կը մատնէ:

Ահա եկաւ Յուդա անգութ անգորով¹
Մեծ բազմութեամբ մարդկանց սրով եւ բրով:
Դաժան մատնիչն տուաւ անոնց այս նշան.
Զով համբուրեմ, ըսաւ, բռնեցէք շոյտ զայն:

Մօտեցաւ Յիսուսի. Բարեւ, Վարդապետ,
Ըսաւ եւ համբուրեց իւր Տէրն ծածկազէտ:
Յիսուս ըսաւ. Ասոր համար դու եկար:
Ամէնք իսկոյն ինկան վրան զազանաբար:

Մէյ մ'ալ Յիսուսի մէկն աշակերտներէն
Քաշեց արագապէս իւր սուրն պատենէն,
Քահանայապետին զարկաւ ծառային,
Կտրեց անոր ականջն մէկ զարկով ուժգին:

Յիսուս ըսաւ. «Դարձուր սուրբդ իւր պատեան,
Ով սուր կ'առնու՝ կ'իյնայ սրով անգթութեան:
Չեմ կարող աղաչել միթէ Հօրս գթած,
Որ զրկէ հոս ինձ բիւր գնդեր հրեշտակաց:»

¹ Մատթ. Ի. Զ. 47—75:

Յետոյ դարձաւ զօրութեամբ աստուածային¹
Ականջն իսկոյն բժշկեց այն ծառային:
Յիսուս ըսաւ ամբոխին ան ժամանակ.
«Ելէք սրով բռնել զիս իբր աւազակ:

Միշտ ձեզի մօտ սորվեցնէի սուրբ տաճարն
Զբռնեցիք, այժմ բռնեցիք անպատճառ:»
Այս ամէն բան եղաւ ճշդիւ, ո՞վ դու մարդ,
Որ կատարուին Մարգարէից գրքերն արդ:

Աշակերտներն ամէնք մէկանց նոյն հետայն
Թողին Յիսուս ահա դողով եւ փախան:
Անոնք տարին Յիսուս Կայիափային,
Ուր դալիրներ եւ ծերեր ժողովուած էին:

Պետրոս հռուանց կերթար՝ սիրտը պատած ահ,
Քահանայապետին մինչեւ ի մեծ սրահ.
Ներս մտնելով ծառայից հետ էր նստած,
Որ Յիսուսի տեսնէ մօտէն կատարածն:

Իսկ քահանայապետն եւ բոլոր ատեանն
Խնդրէին սուտ վկայութիւն անոր վրան,
Որ ըսպանեն, բայց բան մ'ալ չէին գտներ
Եկած թափուած բազմութիւ սուտ վկաներ:

Ասի՛ Կրնամ, կ'ըսէին վկաներ երկու,
Քակել շինել, կ'ըսէր, տաճարն Աստուծու:
Քահանայապետն ելաւ. Ձե՞ս պատասխաներ,
Կ'ամբաստանեն, ըսաւ վրադ ի՞նչ բաներ:

¹ Ղուկ. ԻԲ. 51:

Յիսուս կենար լուռ ու մունջ բոլորովին
Քահանայապետը կրկնեց զայրագին.
Յանուն Աստուծոյ կենդանւոյ ըսէ մեզ,
Թէ դուն, Բրքիստոս Որդի Աստուծոյ ես:

— Ըսաւ Յիսուս. Դուն ըսիր, բայց արդարեւ
Պիտի տեսնէք, կ'ըսեմ ձեզ, այսուհետեւ
ԶՈրդի մարդոյ աջակողմը չօր նստած
Ամպոց վերայ հետ անթիւ հրեշտակաց:

Նա կատղեցաւ, ըզգեստներն պատռեց, ըսաւ.
Հայհոյեց, ալ ինչ պէտք է վկայ բնաւ.
Արդ ուրեմն ի՞նչպէս ձեզ կ'երեւի արդար:
— Մահապարտ է, ըսին ամէնք կատղաբար:

Թքին երեսն, ծեծեցին ան ժամանակ,
Կը զարնէին ոմանք ալ անոր ապտակ.
Մարգարէացիւր մեզ, կ'ըսէին, Բրիստոս,
Գիտցիր հիմայ, ո՞վ է զարնողն քեզի հոս:

Պետրոս նստէր տրտում տխուր դաւթէն դուրս,
Ըսաւ մէկ կին մ'Յիսուսի հետ էիր դու:
— Նա ուրացաւ շուտով առջեւն ամենուն.
Զեմ դիտեր ես, ըսաւ, ինչե՛ր խօսիս դուն:

Երբ Պետրոս դռնէն դուրս ելել ըսկրսաւ,
Ցեսաւ զանի ուրիշ մէկ կին մ'եւ ըսաւ
Հոն տեղ կեցողներուն. Նայեցէք, ասի
Նազովրեցւոյն հետ մէկ տեղ էր Յիսուսի:

Դարձեալ երդմամբ նա ուրացաւ եւ ըսաւ .
 — Թէ չեմ գիտեր, չեմ ճանչնար այն մարդն բնաւ :
 Եւ քիչ մը ժամանակ անցնելէն ետեւ՝
 Մէկալնոնք Պետրոսին ըսին . Արդարեւ

Դուն ալ Յիսուսի հետ եղողներէն ես ,
 Վասն զի քու լեզուդ կը յայտնէ ըզքեզ :
 — Ըսկսաւ նղովել , երդնուլ չարաչար
 Երբորդ անգամ . Թէ այն մարդն ես չեմ ճանչնար :

Իսկոյն հաւն խօսեցաւ . եւ յիշեց Պետրոս
 Յիսուսի ըսած այն յառաջութենէ խօսքն .
 Թէ զիս պիտ' ուրանաս հաւն դեռ չխօսած :
 Դուրս ելաւ սիրտն փղցկած՝ դառնապէս ելաց :



ԺԸ. Տ Ա Ղ

Յիսուս կը դատաւարտուի եւ կը մեռնի :

Քահանայապետք, ծերք, դէմ առաւօտին¹
 Յիսուս մեռցնելու չար խորհուրդն ըրին :
 Կապեցին զանիկայ, առին եւ տարին ,
 Պիղատոսի սուին ձեռքն դատաւորին :

Յուդա տեսնելով որ անմեղըն Յիսուս
 Դատաւարտեցաւ, զղջացաւ, բայց շատ ուշ ,
 Եւ դարձուց ըստակն քահանայապետաց .
 Մեղայ, մատնեցի զարիւն արդար, ասաց :

— Անոնք ըսին Թէ՝ Մեղի ի՞նչ, դուն գիտես :
 Նետեց ըստակն եւ խեղդեցաւ դառնապէս :
 Քահանայապետներն առնելով ըստակն .
 Պէտք չէ, ըսին , ձգել զայդ ի գանձանակն .

¹ Մատթ. ԻԵ. 1—56 :

Արեան դին է: Մորհուրդ ըրին որ գնեն
Ագարակ. օտարաց գերեզման շինեն:
Անոր համար այն տեղը կոչուեցաւ Ճիշտ
Մինչեւ ցայսօր արեան Ագարակ ընդ միշտ:

Յիսուս կայնեցաւ, եւ դաժան դատաւորն.
Դո՞ւն ես թաղաւորն Հրէից, հարցուց անոր:
Պատասխանեց Յիսուս խօսքերով հեզիկ.
Դուն ըսիր բերանովդ ահաւասիկ:

Ամբաստանուելով այսպէս Յիսուս անմեղ
Իշխաններէն Հրէից եւ այն պարսպ տեղ՝
Պատասխան տալ չուզեց բնաւ ոչ մէկուն:
Ան ժամանակ Պիղատոս. Ձե՞ն լսեր դուն,

Ո՛րչափ քեզ հակառակ վկայեն, ըսաւ:
Անոր ալ պատասխան չտուաւ բընաւ,
Այնպէս որ չար դատաւորն զարմացաւ շատ:
Տօնին սովորութեան սակայն համեմատ

Դատաւորն արձակել պէտք էր անխափան
Մէկ մեծ կապեալ մ'ուզածը ժողովուրդէն:
Նոյն պահուն ունէին մէկը բռնուած նոր
Յեսու Բարաբբա էր անունն, նշանաւոր:

Խռնեալ ժողովուրդէն ըսաւ Պիղատոս.
Ձո՞վ կ'ուզէք ասոնցմէ, Յիսուս Բրիստոն,
Եթէ արձակեմ ձեզ Յեսու Բարաբբա:
Ձի գիտէր, նախանձէ մատնեցին զնա:

Երբ նա ատենին մէջ ի գահ կը նստէր՝
Իւր կինըն բարեսիրտ զրկեց մարդիկներ.
«Անոր մ'ըներ չարիք, ըսաւ, է արդար,
Տեսեան մէջ տեսայ շատ բան իրեն համար:»

Քահանայապետք, ծերք հաւանեցուցին
Ժողովուրդն, որ խնդրեն կեանքն Բարաբբային,
Իսկ Յիսուս ըսպաննեն մահուամբ չարաչար,
Որ իրենց ըրած էր բարիք անհամար:

Եւ դատաւորն կրկնեց թէ՛ Այս երկուքէն
Ձո՞վ կ'ուզէք դուք: — Անոնք, Բարաբբա, կ'ըսեն:
Պատասխանեց անոնց, ըսաւ Պիղատոս.
Իսկ ի՞նչ ընեմ Յիսուս անուանեալն Բրիստոս:

— «Խաչեցի» ըսին ամէնք աղաղակաւ:
Պատասխանեց նա ալ. ի՞նչ չարիք ըրաւ:
Անոնք կատղաբար պոռային աւելի:
Կ'ըսէին անդադար. Շուտով «խաչեցի»:

Պիղատոս տեսնելով որ օգուտ չ'ըներ,
Աւելի կը ծագին խռովութիւններ,
Ձեռքերն լուաց. Այդ արդարին, խօսեցաւ
Քաւուած եմ ես իւր արիւնէն, գիտնաք լաւ:

Կրկնեց բոլոր ժողովուրդն այն հոն կեցող.
Ատոր արիւնն մեր եւ որդւոց վրայ դայ թող:
Ան ատեն արձակեց Բարաբբան ըստ կամաց,
Յիսուս տուաւ անոնց, որ հանեն ի խաչ:

Դատաւորին կոպիտ վայրագ զինուորներն
 Յիսուս պալատըն արքունի առին ներս.
 Յարձակեցաւ բազմամբոյս գունդըն անմիտ
 Մերկացուցին զՏէր, հազցուցին հին քղամիտ:

Փշէ պսակ մը դրին գլխուն վըրան,
 Աջ ձեռքն տուին մէկ եղէգ բրի նըման.
 Ժուներ դնելով ծաղրէին անոր առջեւ.
 Արքայդ հրէից, կըսէին, քեզի բարեւ:

Թքնելով սուրբ երեսն, եղէգն կ'առնէին,
 Անոր գլխուն անգթաբար զարնէին:
 Յետոյ հանեցին. այն քղամիդն վըայէն,
 Հազցուցին իւր ըղգեստն, տարին որ խաչեն:

Ճամբան բռնեցին Սիմոն Նիւրէն քաղքէն,
 Որ ծանր խաչը Յիսուսի կրէ ետեւէն:
 Եկան հասան վերջապէս այն տեղն ահա,
 Որ կը կոչուի գլխատման տեղ՝ Գողգոթա:

Տուին անոր լեղոյ հետ խառնած գինի,
 Երբ ճաշակեց՝ ոչ խմել ուզեց անի:
 Բեւեռեցին զանի խաչափայտի վըայ,
 Բաժնեցին վիճակաւ ըղգեստներ նորա.

Որ խօսքն կատարուի Դաւիթ մարգարէին.
 «Թէ իրենց մէջ իմ ըղգեստներս բաժնեցին,
 Իսկ պատմուճանիս վըայ ձգէին վիճակ,
 Նստած կենային քովըն իբրեւ պահակ:»

Գլխուն վերեն գրեցին յանցանքն անոր.
 «Թէ այս Յիսուս հրէից է Թագաւոր:»
 Հանին ի խաչ անմեղ մեր Յիսուսի հետ
 Աջէն ձախէն երկու աւազակապետ:

Ամէնք հայհոյեն զանի դառնագին,
 Շարժելով գլուխնին այսպէս կըսէին.
 Վահ, որ քակէիր սուրբ տաճարն եւ նորէն
 Շինէիր զանիկայ շոյտ երեք օրէն.

Թէ Աստուծոյ Որդի ես՝ փրկէ ըղքեղ:
 Բահանայապետք, ծերք ծաղրէին նոյնպէս.
 Ուրիշներ փրկեց կըսէին ասիկայ,
 Իսկ ազատել զինքը չի կրնար հիմայ.

Եթէ Դարայէլի է դա Թագաւոր,
 Իջնայ խաչէն որ մենք հաւատանք ատոր.
 Պիտ՝ փրկէ ատի՝ Թէ յուսացաւ յԱստուած,
 Բանգի դա. Աստուծոյ Որդի եմ. ասաց:

Չարագործներէն մէկն հայհոյէր, այսպէս¹.
 Չեմ դուն Բրիստոսն, կըսէր, փրկէ անձդ եւ ըզմեղ:
 Նշտամբեց զանի ընկերն խօսքով ազդու.
 Նոյն պատիժն ունիս, չեմ վախնար յԱսծոյ դու:

Մենք յիրաւի արժանապէս կ'առնունք արդ
 Հատուցումն մեր ոճիրներուն բազմաշատ.
 Իսկ ասիկայ բոլորովին սուրբ արդար,
 Չգործեց չար բան մը բնաւ ապիկար:

¹ Ղուկ. ԻԳ. 39-43:

Դարձաւ Յիսուսի. Յիշէ զիս, ըսաւ, Տէր,
 Թագաւորութեամբդ երբ գաս ի հրաւեր:
 — Պատասխանեց Յիսուս. Ծշմարիտ կ'ըսեմ,
 Այսօր պիտ' ըլլաս ինձ հետ Դրախտն Նդէմ:

Յանկարծ բոլոր երկիրը տիրեց խաւար
 Ժամը վեցէն մինչեւ իննը անդադար:
 Բարձրը ձայնիւ գոչեց Յիսուս ժամ ըննին
 Թէ՛ «Էլի Էլի Լանա սաբաքթանի».

«Աստուած իմ Աստուած իմ, ինչու զիս Թողիր:»
 Ոմանք. Նղիա կանչէ ըսին յօգն իր:
 Մէկն խկոյն վազեց զարկաւ եղէգի վրայ
 Լի քացախով սպունդ, որ խմէ անիկայ:

Ոմանք ալ կ'ըսէին Թէ՛ Տեսնենք կու գայ
 Փրկելու զատիկայ սուրբըն Նղիա:
 Յիսուս դարձեալ շատ ամուր ձայնիւ պոռաց
 Եւ հոգին աւանդեց, գնաց առ Աստուած:

Ահա վարագոյրն տաճարին մեծպայծառ
 Ծեղքեցաւ երկու վերէն մինչեւ ի վար.
 Նրկիր շարժեցաւ կերպարանքով ահեղ,
 Ծաթեցան քարեր, պատուեցան ամէն տեղ:

Եւ գերեզմաններ բացուեցան շոյտ անդէն,
 Շատ ննջեցեալներ յարեան գերեզմանէն.
 Եկան մտան սուրբ քաղաքն եւ երեւցան
 Շատերուն իսկ յետ Յիսուսի յարութեան:

Հարիւրապետն տեսնելով եւ իւր մարդիկ
 Նղած ամէն պատահած հրաշայլք՝
 Զարհուրեցան, վախցան սաստիկ եւ ըսին.
 Ծշմարտիւ այս անձն էր Աստուծոյ Որդին:

Հոն հեռւանց կը կենային շատ կանայք,
 Լային տրտում արցունքներով անքանակ.
 Անձնուէր եկան Յիսուսի ետեւէն,
 Որ չարչարանաց մէջ անոր ծառայեն:



ԺԹ. Տ Ա Ղ

Յիսուս կը թաղուի:

Սոյն օր ուրբաթ էր, Հրեաներ որպէս զի՝
Խաչի վըայ չմնայ մարմինն Յիսուսի,
Աղաչեցին Պիղատոսի մարդասպան,
Խաչուողներուն մարմինք մէջտեղաց բառնան:

Զինուորք եկան խորտակեցին սրունգներ
Աւազակաց. Յիսուս դեռ նոր էր մեռել,
Անոր սուրբ մարմննոյն չդրպան բռնաւ,
Անոնցմէ մէկն խոցեց անոր կողն տիգաւ:

Վաղվաղակի Հոսեց կողէն ջուր արիւն,
Եւ տնտնողն վկայեց, իւր վկայութիւն
Գիտենք է ճշմարիտ, որ սերտիւ դուք ալ
Հաւատաք Բրիստոսի խօսքին անսխալ:

¹ Յովհ. ԺԹ. 31—7:

Ասի եղաւ որ կատարուի սուրբ խօսքը¹
«Թէ չփշրի պիտի բնաւ իւր ոսկրը:»
Դարձեալ կ'ըսէ Աստուածաշունչն ուրիշ հեղ².
«Դառնան պիտի նային անոր խոցուած տեղն:»

Արիմաթեա քաղքէն մէկ մեծատուն մարդ³,
Աշակերտ Յիսուսի մեր Յովսէփ անուամբ,
Եկաւ Պիղատոսի քովը դատաւորին,
Խնդրեց զպատուական Յիսուսի մարմինն:

Եւ Պիղատոս տըւաւ շուտով հրաման:
Առաւ Յովսէփ մարմինը նուիրական,
Կտաներով պատեց դրաւ գերեզմանն,
Քարի մէջ նա փորեց, էր նոր աննման:

Դրաւ վրան կափարիչ քար հաստատուն,
Աղօթելով տխրազգած դարձաւ իր տուն:
Մագթաղենացի, միւս Մարիամ սուգ մտած՝
Կենային յարգութեամբ շիրիմին դիմաց:

Երկրորդ օր ժողովեցան քահանայք, դպիրներ,
Պիղատոսի ըսին. Յիշեցինք մենք, Տէր,
Այն մոլորեցուցիչն մեզ երեք օրէն
Պիտի յառնեմ կ'ըսէր ես մեռելներէն:

¹ Եւեջ. ԺԹ. 46:

² Սաղմ. ԼԳ. 20:

³ Մատթ. ԻԷ. 57—66:

Արդ՝ պահապան դիր երեք օր, մի թերեւս
Գողնան զանի աշակերտք այնուհետեւ,
Ըսեն ժողովրդեան եթէ՝ Յարեաւ նա.
Վերջին մոլորութիւնս շատ գէշ պիտ' ըլլայ:

Ըսաւ Պիղատոս թէ՝ Դուք ունիք զինուոր,
Գացէք զգուշացէք մինչեւ երեք օր:
Գացին զգուշացան երեք օր յաւէտ
Եւ վէմը կնքեցին զինուորներուն հետ:



Կ. Տ Ա Ղ

Յարութիւն Յիսուսի Քրիստոսի:

Շաբաթ իրկուն Մարիամ Մագլթաղենացին՝
Եւ մէկայն գերեզմանն տեսներու գացին:
Մէյ մ'ալ առաւօտուն եղաւ դղրդիւն.
Հրեշտակ Տեառն իջաւ տեքով շատ փայլուն.

Իւր զգեստներն էին ճերմակ ձեան նրման,
Շիրիմին քարն առաւ վեր՝ նստաւ վըրան.
Անոր վախէն պահապանք խրովեցան,
Կապուտկեցան, շատ վախցան, մեռել դարձան:

Ըսաւ հրեշտակն լուսապայծառ՝ կանանց.
«Մի վախնաք, գիտեմ. զՅիսուս խնդրէք սրտանց.
Ձէ հոս, այլ յարեաւ, ինչպէս ըսաւ յառաջ,
Եկէք տեսէք դուք հիմայ իր տեղն հանգած:

Գացէք փութանակի դուք ուրախալիւր,
Թէ նա յարեաւ, ըսէք աշակերտաց իւր.
Չեզմէ յառաջ պիտի հասնի Գալիլեա,
Այս ամէն բան ըսի ես ձեզի ահա:»

Վախով խնդումով ելան գերեզմանէն,
Որ աշակերտաց այս մեծ լուրը պատմեն:
Նրբ անոնք զացին աւետիս տալ արագ,
Զօրականներէն ումանք եկան քաղաքն,

Քահանայապետից նոյնպէս եւ զպրաց
Պատմեցին ամէն ինչ եղած պատահած:
Անոնք միասին ծերոց հետ ժողվեցան,
Խորհուրդ ըրին որ զօրականներուն տան

Շատ ստակ. տուին արդեամբք դէզադէզ,
Ըսին. Ըսէք դուք ժողովրդեան այսպէս.
«Մինչ մենք ի քուն էինք իր աշակերտներն
Նկան զանի գաղտուկ գողացան գիշերն:

Եթէ դատաւորն այդ բան լսէ ծածուկ՝
Զանի կը հաճենք մենք, անհոգ եղէք դուք:»
Փութացին ընել սորվեցան ինչպէս որ.
Հըրէիցմէ այս լուրն ելաւ մինչ ցայսօր:



ԿԱ. ՏԱՂ

Յիսուս Աշակերտաց կ'երեսայ:

Աշակերտք ժողվեցան Յարութեան իրկունն¹,
Դռներն գոց, Հրէիցմէ սաստիկ վախնալուն:
Նրեցաւ Յիսուս անոնց յայտնապէս,
Կայնեցաւ մէջտեղ եւ ըսաւ. «Բարեւ ձեզ»:

Աշակերտաց ցուցուց իր կողն եւ ձեռքեր.
Անոնք շատ ցնծացին երբ տեսան զճէր:
Ըսաւ անոնց Յիսուս դարձեալ. «Բարեւ ձեզ,
Ինչպէս Հայրս զիս զրկեց, ես ալ զրկեմ զձեզ»:

Զայս ըսելով՝ փէց անոնց երեսն վեր.
«Առէք արդ սուրբ Հոգին, թէ մէկուն մեղքեր
Թողուք, պիտի թողուին. մէկուն թէ կապէք՝
Պիտի չարձակուին իր այն մեղքերն երբեք»:

¹ Յովհ. Ի. 19—25:

Իսկ Թովմաս առաքեալը չէր անոնց հետ
 Երբ որ եկաւ Յիսուս անոնց ողջոյն ետ :
 Ըսին Թովմասին մէկալ աշակերտներն .
 Թէ լի խնդութեամբ տեսանք ամէնքս զՏէրն :

Պատասխանեց յանդգնութեամբ անիկայ .
 Թէ չտեսնեմ նշաններն իր ձեռաց վըայ ,
 Մատերս կողին , բեւեռներուն տեղն անգամ
 Եթէ չխոթեմ , չտեսնեմ ոչ հաւատամ :



ԿԲ. Տ Ա Ղ

Յիսուս դարձեալ Աշակերտաց կ'երեւայ :

Ութ օրէն վերջը դարձեալ աշակերտներ¹
 Ժողոված էին եւ Թովմաս անոնց հետն էր :
 Յիսուս եկաւ մեղմով , դռները փակուած ,
 Կայնեցաւ անոնց մէջ . « Բարեւ ձեզ , ասաց : »

Յետոյ ըսաւ Թովմասին . Եկուր այժմ տես
 Զեռքերս ու կողս շօշափէ , որ նոյն եմ ես .
 Մ'ըլլար անհաւատ , այլ միշտ հաւատարիմ :
 — Պատասխանեց Թովմաս . Տէր իմ , Աստուած իմ :

— Կրկնեց Յիսուս . Հաւատաս տեսներով զայդ .
 Երնեկ անոնց որք չտեսած հաւտան հաստատ :
 Ուրիշ նաեւ շատ հրաշքներ Յիսուս գործեց ,
 Որոնք գրուած չեն բնաւ այս գրքիս մէջ :

Արդ այս այսչափ քիչ բանով գրուեցաւ հոս ,
 Աստուծոյ Որդի հաւատաք Յիսուս Զրիստոս ,
 Որ ճշմարտութեամբ հաւտաք հանապազօր ,
 Երանելի դուք ըլլաք անուամբ անոր :

¹ Յովհ. Ի. 26—31 :



ԿԳ. Տ Ա Ղ

Յիսուս դարձեալ Աշակերտաց կ'երեւայ:

Երկու աշակերտներն կ'երթային մէկ հեղ¹
Տխուր, շտապելով դէպ Նմաւուս գեղ.
Խօսէին ճամբան անցած բաներու վրայ:
Երբ խիստ վեճէին՝ ինքը Յիսուս ահա

Մօտեցաւ անոնց, կ'երթար ի միասին,
Իսկ անոնք առանց նայելու կ'երթային:
Ըսաւ անոնց. Ի՞նչ կը վեճէիք ճամբան,
Ինչո՞ւ կ'երեւաք դուք զիմօք տխրական:

— Պատասխանեց մէկըն անոնցմէ խսկոյն,
Որուն, Կրդէովպաս կը կոչուէր անունն.
Դո՞ւն միայն կաս Երուսաղէմ, չե՞ն գիտեր,
Ինչէր եղան, պատահեցան այս օրեր:

— Ըսաւ անոնց. Ի՞նչ: — Եւ պատասխանեցին
Անոնք եւ ըսին. Յիսուս Նազովրեցին
Եղաւ մարգարէ՝ զօրաւոր արդարեւ
Խօսքով ու գործով Ասծոյ, մարդկան առջեւ:

¹ Ղուկ. ԻԳ. 13—35:

Քահանայապետք մեր, ժողով իշխանաց
Ի՛նչպէս մահապարտ հանին զնա ի խաչ:
Մենք կը սպասէինք, պէտք էր անի փրկել
Ազատութեամբ մեր ժողովուրդն իսրայէլ:

Անցաւ վրան երեք օր սակայն այնպէս.
Զարմացուցին շատ նաեւ կանայք զմեզ.
Որոնք առտու կանուխ դացին գերեզմանն,
Զգտան իր մարմինն, քաղաքը դարձան:

Ըսին. Հըրեշտակաց տեսան տեսիլներ,
Թէ գերեզմանէն նա դեռ նոր էր յարեր:
Մեզմէ ալ ոմանք գնացին գերեզմանն,
Կանանց պէս գտան, բայց զանի չտեսան:

Նա ըսաւ անոնց. «Ո՛րչափ դուք անմիտ էք
Հաւատալու ինչ խօսեցան մարգարէք.
Նոյններն չարչարել Բրիստոսի չէ՞ր վայել
Եւ մեծ յաղթութեամբ իւր փառքը մտանել:»

Մովսէսէն եւ բոլոր մարգարէներէն
Մեկնէր ինչ որ զրուած էր վրայ իրեն:
Երբ մօտեցան իրենց այն երթալու գեղն՝
Նա պատճառեց երթալ ուրիշ հեռու տեղ:

Անոնք ըսին. Ո՞ր կ'երթաս դուն զիշերով,
Կեցիր հոս մեր քով: Եւ մնաց իրենց քով:
Նստաւ սեղանի շատ սիրով անոնց հետ,
Առաւ հացն օրհնեց, կտրեց եւ անոնց ետ:

Անոնց աչերն նոյնհետայն իսկ բացուեցան,
 Ճանչցան իրենց Վարդապետն աստուածական:
 Նա շոյտ անոնցմէ եղաւ աներեւոյթ:
 Կ'ըսէին. Ի՛նչպէս սրտերնիս չէր անքոյթ,

Երբ ճամբան մեզի հետ խօսէր անդադար,
 Ի՛նչպէս սուրբ Գրոց իմաստն մեզ կը բանար:
 Նոյն ժամուն դարձան Երուսաղէմ ուրախ,
 Գտան աշակերտներ ժողված մէկտեղ խաղաղ:

Ըսին անոնք թէ՛ Յարեաւ Տէրն արդարեւ
 Եւ երեւեցաւ Սիմոնի ակներեւ:
 Ինչ որ ճամբան խօսած էին՝ պատմեցին,
 Թէ ի՛նչպէս զինքն յայտնեց ի բաշխել հացին:



ԿԴ. Տ Ա Ղ

Համբարձում Յիսուսի Քրիստոսի:

Մինչդեռ խօսէին Յիսուս իբրեւ փայլակ¹
 Երեւցաւ, ըսաւ թէ՛ Նս եմ, մի վախնաք:
 Անոնք վախնային, ճիւղաղ կը կարծէին:
 Նա ըսաւ. Ինչո՞ւ խռովիք դառնագին:

Նս նոյն եմ, տեսէք ձեռքերս ու ոտքերս լաւ,
 Զննեցէք, ոգի ոսկրը չունի բնաւ,
 Ինչպէս տեսնէք որ ես ունիմ ձեզ ի ցոյց:
 Զայս ըսելով՝ իր ձեռքերն, ոտքերն ցուցուց:

Երբ տակաւին զարմացած չհաւտային,
 Ըսաւ. Ունի՞ք կերակուր դուք մարդկային:
 Անոնք տուին անոր ձուկ եւ մեղրահաց:
 Առաւ կերաւ յայտնապէս անոնց առաջ:

Դասեցաւ անոնց հետ եւ ըսաւ այսպէս².
 «Ինչպէս Հայրս զըկեց զեւ, ես ալ զըկեմ զձեզ,
 Ինձի տրուեցաւ իշխանութիւն ի սպառ
 Երկնքի երկրի վրայ լիակատար:

¹ Ղուկ. ԻԴ. 36—43:

² Մատթ. ԻԸ. 18—20:

Գացէք մկրտեցէք հեթանոսք ողջոյն
 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն:
 Սորվեցուցէք անոնց պահել ամէն բան
 ինչ որ պատուիրեցի ձեզի միաբան:

Ահաւասիկ ես ձեզի հետ եմ անմոռաց
 Հանապաղ մինչեւ աշխարհիս կատարածն:
 Նստէք այդ քաղաքն, աղօթեցէք սրտանց¹,
 Մինչեւ ընդունիք զօրութիւն ի բարձանց:

Յետոյ հանեց զերենք Բեթանիայ լեռն,
 Տարածեց ձեռքերն, օրհնեց աշակերտներն:
 Երբոր կ'օրհնէր զերենք քիչ քիչ վեռացաւ,
 Ահա կամաց կամաց երկինքն համբարձաւ:

Երկրպագելով՝ անոնք իրիկուան դէմ
 Մեծ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ:
 Ամէն օր, ամէն ժամ էին սուրբ տաճարն,
 Օրհնէին, զովէին զԱստուած անդադար:

¹ Ղուկ. ԻԳ. 49—53:



ԿԵ. Տ Ա Ղ

Գալուստ Հոգւոյն Սրբոյ:

Օրերն չմնացած Պենտէկոստէին¹
 Բոլոր աշակերտներն էին միասին:
 Յանկարծ երկնքէն եկաւ հասաւ հնչիւն
 Սաստիկ հովի պէս եւ լեցուց բոլոր տունն:

Բաժնուած լեզուներ անոնց՝ կրակի նրման
 Երեւցան նստան ամէն մէկուն վըրան.
 Ամէնք լրան սուրբ Հոգւով պարգեւաբեր,
 Սկսան խօսիլ այլեւայլ լեզուներ:

Երուսաղէմ քաղաքն էին բընակած
 Աստուածավախ մարդիկ յամենայն աղբաց:
 Երբ այս ձայնն լուեցաւ՝ վազեց բազմութիւնն,
 Ամէնք լսէին հեշտեաւ իրենց լեզուն:

Կ'ըսէին իրարու զարմացած սաստիկ.
 Այս խօսողներն մի՞թէ չէ՞ն Գալիլեացիք.
 Մենք պէս պէս ազգեր, Պարթեւք, Իլամացիք,
 Մարք, Միջագետքիք, Պոնտացիք, Ասիացիք:

¹ Գործք Առաք. Բ. 1—47:

Հրէաստանցիք, Գամիրացիք, Փռիւզիացիք,
Պամիրիւնացիք, Եգիպտացիք, Լիբացիք,
Կիւրենացիք եւ պանդուխդք Հռոմայեցիք,
Հրեայք եւ պանդուխդք, Կրետացիք, Արաբացիք:

Ի՞նչպէս կը լսենք մայրենի լեզուն մեր,
Կ'իմանանք Աստուծոյ սքանչելիքներ.
Ի՞նչ պիտ' ըլլայ այս, կ'ըսէին իրարու:
Ոմանք ծաղրէին եթէ՛ Են գինարբու:

Իսկ Պետրոս տասնութէկ առաքեալներով
Ոտք ելաւ խօսեցաւ Քրիստոսի մէկ դով.
Հրէաստանցիք, ըսաւ, յայտնի ըլլայ ձեզ,
Մտիկ ըրէք ամէնքդ ինձ ճշմարտապէս:

Ձեն ատոնք գինով, ինչպէս դուք կը կարծէք,
Զի առաւօտեան դեռ ժամըն է երեք:
Եովէլ մարգարէին խօսքն է արդարեւ,
Որ կ'ըսէ. «Այս օրերն անցնելն ետեւ»¹

Պիտի հեղում հոգիէս, կ'ըսէ Աստուած,
Ամէն մարմնոյ վրայ մեծ սրտով գլծած,
Պիտ' մարգարէանան մանչեր, աղջկունք ձեր,
Պիտի տեսնեն տեսիլ երիտասարդք, ծերք:

Ժառայքս եւ աղախնայքս նոյնպէս միաբան
Նոյն ժամանակ պիտի մարգարէանան:
Պիտ' տամ նշան երկինք վեր, երկիր վար,
Արիւն եւ կըրակ, մըրըրիկ անդադար:

¹ Եովէլ. Բ. 28—32:

Արեգակ պիտի խաւարի եւ լուսին,
Մինչեւ օր Տեառն գայ մեծն եւ երեւելին:
Ով անոր անունն պիտ' կանչէ նոյն ժամայն՝
Եւ պիտի փրկէ իւր անձըն յաւիտեան:

Իսրայելացիք, լսեցէք խօսքերուս.
Աստուծոյ եկաւ Նազովընցի Յիսուս.
Ձեր մէջ քարոզեց, հրաշքներ գործեց անբաւ,
Ինչպէս այդ ամէն տեսաք, գիտէք դուք լաւ:

Կանխատեսութեամբն Աստուծոյ խորաքննի
Ձա զանօք խաչի վրայ սպաննէք զանի.
Աստուած հրաշապէս յարոյց զանիկայ,
Անոր տիրել մեզ նման չէր կրնար մահ:

Դաւիթ իսկ կ'ըսէ. «Տեսնէի ամէն ժամ»¹
Աջակողմս զձեր, որ ես չգողդողամ.
Անոր համար ցնծացաւ սիրտս եւ լեզուս,
Նոյնպէս մարմինս բնակեցաւ ի մեծ յոյս:

Իմ անձըն դժոխք պիտի չթողուս դուն,
Որ քու սուրբըդ տեսնէ ապականութիւն:
Այս Յիսուս յարոյց Բարձրեալն Աստուած անմահ,
Որուն մենք ամէնքդս վկայենք հիմայ:

Առաքեց Հոգւոյն սրբոյ զաւետիս մեզ,
Զոր կը տեսնէք դուք ամէնքդ յայտնապէս:
Արդ ճշմարտիւ բոլոր Իսրայել գիտնայ,
Օծեալ Աստուած ըրաւ՝ Բարձրեալ Տէր զնա:

¹ Սաղմ. Ժ. 8:

Զայն Յիսուս զոր մեռցուցիք ի մահ անարգ:
 Զայս լսելով ամէնք զղջացին արագ.
 Ըսին Պետրոսի, Առաքելոյ՝ ազատ.
 Ի՞նչ ընենք, եղբարք, տուէք մեզի խրատ:


— Ըսաւ Պետրոս անոնց. Ապաշխարեցէք
 Եւ մըկրտուի շուտով ձեզմէ ամէն մէկ
 Յիսուսի անուամբ ի թողութիւն մեղաց,
 Առնուք զաւետիս Հոգւոյն Սրբոյ սրտանց:

Ձեզ այս աւետիք, նոյնպէս որդւոց ձեր,
 Ամենուն, զոր պիտի կոչէ Աստուած մեր:
 Ուրիշ խօսքերով կ'ըլլար անոնց մխիթար.
 Հեռացէք կ'ըսէր, այս ազգէն թիւր եւ չար:

Շատեր մտիկ ըրին անոր՝ մկրտուեցան,
 Երեք հազար հոգի նոյն օրը դարձան:
 Հանապազորդէին վարդապետութեան
 Առաքելոց, հացին բաշխման միաբան:

Իւրաքանչիւր բազում ահ, երկիւղ ունէր,
 Առաքեալք գործէին շատ շատ հրաշքներ:
 Հաւատացեալք բոլոր էին միասին,
 Ամենայն ինչ հասարակաց ունէին:


Վաճառէին իրենց գոյք եւ ըստացուածք,
 Բաշխէին ամէնուն առատ պէտքն եղած:
 Միաբանութեամբ օր աւուր կ'երթային
 Տաճարն, բեկանէին զհացն առանին:



Եւ ուրախ սրտիւ առնուին կերակուր,
 ԶԱստուած օրհնէին, գովէին ընդհանուր.
 Ժողովուրդն իրենց կ'ընէր յարգանք, պատիւ,
 Եւ Տէր կ'աճեցնէր միշտ փրկելոցը թիւ:



Փառք, պատիւ Երրորդութեան,
 Հօր, Որդւոյ Միածնական,
 Սուրբ Հոգւոյն միանգամայն
 Այժմ եւ միշտ եւ յաւիտեան.
 Ամէն:



Յ Ա Ն Կ Ն Ի Խ Թ Ո Յ

Ա. Տաղ: Մարդեղութիւն Յիսուսի Գրիստոսի	1
Բ. Տաղ: Այցելութիւն Մարեմայ	3
Գ. Տաղ: Ծնունդ Յիսուսի Գրիստոսի	4
Դ. Տաղ: Փախուստ Յիսուսի: Կոտորած անմեղ Մանկանց	6
Ե. Տաղ: Ծնունդ Յովհաննու Մկրտչի	7
Զ. Տաղ: Թլփատութիւն եւ Ընծայում Յիսուսի	9
Է. Տաղ: Մանուկն Յիսուս ի տաճարին	11
Ը. Տաղ: Քարոզութիւն Յովհաննու Մկրտչի	13
Թ. Տաղ: Յիսուս կը մկրտուի	15
Ժ. Տաղ: Յիսուսի Քարոզութիւն	16
ԺԱ. Տաղ: Կանայ Հարսանիքը	18
ԺԲ. Տաղ: Քարոզութիւն Յիսուսի	20
ԺԳ. Տաղ: Քարոզութիւն Յիսուսի	22
ԺԴ. Տաղ: Քարոզութիւն Գրիստոսի	24
ԺԵ. Տաղ: Քարոզութիւն Գրիստոսի	26
ԺԶ. Տաղ: Յիսուս Հարիւրապետին ծառան կը բժշկէ, եւ նաւ կը մտնէ	28
ԺԷ. Տաղ: Զաքէոս Մաքսապետ	30
ԺԸ. Տաղ: Նիկողեմոս Իշխան	31
ԺԹ. Տաղ: Յիսուս շատ մը հիւանդներ կը բժշկէ	34
Ի. Տաղ: Երկու Լուսայք այրի կնոջ	36
ԻԱ. Տաղ: Յիսուս տաճարը կը մտնէ	37

ԻԲ. Տաղ: Մեղաւոր կին մը Յիսուսի առջեւ	39
ԻԳ. Տաղ: Սամարացի կինը	41
ԻԴ. Տաղ: Մատթէոս մաքսաւորը	44
ԻԵ. Տաղ: Յիսուս առաքեալները կը զըկէ	46
ԻԶ. Տաղ: Առակ Սերմանացանին	48
ԻԷ. Տաղ: Առակ վասն Արքայութեան երկնից	50
ԻԸ. Տաղ: Գլխատումն Յովհաննու Մկրտչի	52
ԻԹ. Տաղ: Յիսուս հացը կը բաղմացնէ	54
Լ. Տաղ: Յիսուս ծովու վըայ կը քալէ	56
ԼԱ. Տաղ: Քանանացի կինը	58
ԼԲ. Տաղ: Այլակերպութիւն Յիսուսի	60
ԼԳ. Տաղ: Թէ ո՞վ է մեծ	62
ԼԴ. Տաղ: Ընկերը յանդիմանելու եւ անոր մեղքերն թող- լու վըայ	64
ԼԵ. Տաղ: Մեղաւոր կին մը	66
ԼԶ. Տաղ: Թէ կրնայ մէկն իւր կինն թողուլ	68
ԼԷ. Տաղ: Առակ Այգււոյն	69
ԼԸ. Տաղ: Առակ առ Փարիսեցիս	71
ԼԹ. Տաղ: Որդի Այրւոյն	73
Խ. Տաղ: Յետին տեղը նստելու վըայ	74
ԽԱ. Տաղ: Գթած Սամարացին	75
ԽԲ. Տաղ: Մարթա եւ Մարիամ	77
ԽԳ. Տաղ: Հարուստն եւ Աղքատն	78
ԽԴ. Տաղ: Անառակ Որդին	80
ԽԵ. Տաղ: Յիսուս Հովիւ քաջ	82
ԽԶ. Տաղ: Թագաւորութիւն Քրիստոսի	83
ԽԷ. Տաղ: Յիսուս Երուսաղէմ կը մտնէ	85
ԽԸ. Տաղ: Յիսուս Կոյր մը կը բժշկէ	87
ԽԹ. Տաղ: Տառն Կուսանք	91
Ծ. Տաղ: Փարիսեցին եւ Մաքսաւորն	93
ԾԱ. Տաղ: Կատարած աշխարհի	95
ԾԲ. Տաղ: Գալուստ Որդւոյ մարդոյ	99

ԾԳ. Տաղ: Յարութիւն Ղազարու	101
ԾԴ. Տաղ: Յիսուս իւր մահն կ'իմացընէ	105
ԾԵ. Տաղ: Վերջին Ընթրիք Քրիստոսի	107
ԾԶ. Տաղ: Յիսուս Գեթսեմանի պարտէզին մէջ	109
ԾԷ. Տաղ: Յուգա զՔրիստոս կը մատնէ	111
ԾԸ. Տաղ: Յիսուս կը դատապարտուի եւ կը մեռնի	115
ԾԹ. Տաղ: Յիսուս կը թաղուի	122
Կ. Տաղ: Յարութիւն Քրիստոսի	125
ԿԱ. Տաղ: Յիսուս Աշակերտաց կ'երեւայ	127
ԿԲ. Տաղ: Յիսուս դարձեալ Աշակերտաց կ'երեւայ	129
ԿԳ. Տաղ: Յիսուս դարձեալ Աշակերտաց կ'երեւայ	130
ԿԴ. Տաղ: Համբարձում Քրիստոսի	133
ԿԵ. Տաղ: Գալուստ Հոգւոյն Սրբոյ	135



1-

20.8.

ԳԻՆԸ՝ ՖՐԱՆԿ 1.40 = ՌՈՒԲԼԻ —.50

11764

